

# ԼՍԱՐԱՐ

29(319)

10.10.2012թ.

Հրատարակվում է 1999թ. սեպտեմբերից

Лусарар

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

## ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԲԱԿՈ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԸՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՈՒՍՈՒՅՉԻ ՕՐԿԱ ԱՌԹԻՎ

Սիրելի ուսուցիչներ

Արցախի Հանրապետության իշխանությունների և անձամբ իմ անունից ի սրտե շնորհավորում եմ ձեզ մասնագիտական տոնի առթիվ: Սա տոն է մեր ողջ ժողովրդի համար, քանի որ դժվար է գերազանհատել ձեր դերը մատաղ սերնդի կրթության, նրա հայեցի դաստիարակության ու ազգապահպանման գործում: Եվ ամենեկին էլ պատահական չէ, որ ուսուցչի աշխատանքը միշտ մեծ հարգանք է վայելել Արցախում: Այսօր էլ կրթությունը հանդիսանում է մեր հանրապետության զարգացման առանցքային ուղղություններից մեկը, առանց որի անհնար կլինի արժանի տեղ գրադեցնել ժամանակակից աշխարհում: ԼՂՀ իշխանություններն այսուհետև կանգնեն հնարավոր ոլորտում առկա խնդիրները ժամանակին ու արդյունավետ լուծելու ուղղությամբ: Վստահ եղեք՝ այդ գործընթացը կկրի շարունակական բնույթ: Թանկագին բարեկամներ, մեկ անգամ ևս շնորհավորում եմ բոլորիդ և մաղթում քաջառողջություն, երջանկություն, բեղմնավոր աշխատանք ու ամենայն բարիք:

Ստեփանակերտ, 5 հոկտեմբերի 2012թ.

## ԼՂՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՍԼԱԿԱ ԱՍՐՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԻ ԽՈՍՔԸ

Սիրելի ուսուցիչներ

Մասնագիտական տոնի՝ Ուսուցչի օրվա կապակցությամբ ընդունեք իմ ջերմ շնորհավորանքներն ու մաղթանքները:

Մանկավարժությունը իրավամբ համարվում է ամենահարգված մասնագիտություններից մեկը, և պատահական չէ, որ հայ ժողովուրդը ուսուցչի հանդեպ միշտ էլ ունեցել է խորը ակնածանք: Անուրանալի է ձեր վաստակը սերունդների կրթության ու դաստիարակության գործում, և այն մեծ պատասխանատվությունը, որով ամեն օր կատարում եք ձեր դժվարին աշխատանքը, արժանի է ամենայն դրվատանքի:

Մեր պետության հետագա հզորացումը պայմանավորված է նաև ձեր կատարած աշխատանքով, քանզի վաղվա սերունդը ձևավորվում է հենց դպրոցում: Ձեր այդ կարևոր առաքելության զմայտմամբ էլ պետությունն առանձնահատուկ ուշադրություն է հատկացնում մանկավարժական խավին և առհասարակ, կրթական համակարգին: Դպրոցաշինության բնագավառում իրականացվող բարեփոխումների ծավալների տարեցտարի ավելացումն այդ ամենի վկայումն է:

Սիրելի ուսուցիչներ

Մեկ անգամ ևս շնորհավորելով մասնագիտական տոնի առթիվ, մաղթում եմ բոլորիդ հաջողություններ աշխատանքում և անձնական կյանքում:

## ԼՈՒՅՍԻ ՍԵՐՄՆԱՋԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՏՈՆԸ

Ուսուցչի օրը՝ որպես մասնագիտական տոն, առանձնահատուկ զգացումով է պարուրում ոչ միայն մանկավարժության բնագավառի աշխատողներին, այլև բոլոր մարդկանց, քանզի չկա հասարակության գեթ մեկ անդամ, որը կրած չլինի ուսուցչի բարերար, կանխորոշիչ ազդեցությունը: Ինչպես հայտնի ասույթն է ասում՝ անգամ հանճարն ունի ուսուցիչ... Դեռ այս հանգամանքի գիտակցումով՝ ամեն տարի հոկտեմբերի 5-ին մեր երկրում հանդիսավորությամբ նշվում է Ուսուցչի օրը:

Օրվա խորհուրդն այս անգամ էլ Ստեփանակերտի մշա-

հանրապետության ուսուցիչներին՝ զմայտելով նրանց դերը երկրի կայացման համար կիրք ու հայրենասեր քաղաքացիներ

դաստիարակելու գործում՝ վստահեցնելով, որ կրթության ոլորտը և այնտեղ առկա հիմնախնդիրները մշտապես գտնվում են պետության ուշադրության կենտրոնում: Անցած տարիներին կատարվել է զգալի աշխատանք, իրականացվել են մի շարք բարեփոխումներ, շոշափելիորեն ավելացել են ոլորտին հատկացվող ֆինանսական միջոցները, հատուկ ուշադրություն է դարձվել ուսուցիչների սոցիալական խնդիրների լուծմանը: Սակայն ամելիքները դեռ շատ են, ասաց նախագահը՝ վստահեցնելով, որ իշխանությունները հաստատական են ոլորտում առկա խնդիրները լուծելու և ոլորտի կայուն զարգացումն ապահովելու գործում:

«ԼՂՀ վարչապետ» հոուշամեդալով պարգևատրելու առիթով՝ Նախարարի կողմից կատարվեց տարվա ամենասպասված ա-



կույթի և երիտասարդության պալատ էր բերել ոչ միայն ուսուցիչներին, այլև երկրի բարձրագույն իշխանությունների ներկայացուցիչներին՝ Նախագահի գլխավորությամբ, Սրբազան հորը, որտեղ հանդիսավորությամբ նշվում էր Ուսուցչի օրը:

Երեկոն բացվեց հայ մեծ լուսավորիչ Խ. Աբովյանի անմահ ստեղծագործության՝ «Վերք Հայաստանի» վեպից հատվածի ասմունքով (ժողովրդական դերասան՝ Քաջիկ Հարությունյան), որում հնչեց միաբանության, մայրենին ու հավատը ամուր պահելու բոլոր ժամանակների սրբազան պատգամը՝ ուղղված հայ ժողովրդին:

«Դպրոց, թե փողոց» ուրախ բեմականացմամբ ուսուցիչներին ողջունեցին Ստեփանակերտի ՄՊՍԿ սաները:

Այնուհետև սկսվում է պաշտոնական մասը. բեմ է հրավիրվում ԼՂՀ Նախագահ Բակո Սահակյանը, ով շնորհավորում է



ծում նա միաժամանակ երախտագիտություն հայտնեց ԼՂՀ Նախագահին՝ կրթական ոլորտին մշտապես ցուցաբերվող աջակցության, պետական մեծ հոգածություն համար, ինչպես նաև ԼՂՀ վարչապետին՝ իր գործունեությամբ համակարգի խնդիրների լուծմանը նեցուկ կանգնելու համար և Ուսուցչի օրվա կապակցությամբ հանրապետության 34 ուսուցիչների



րարողությունը՝ պարգևատրվեցին նախարարության կողմից հայտարարված «Տարվա լավագույն դպրոց», «Տարվա լավագույն ուսուցիչ, լավագույն մանկավարժական փորձ», «Տարվա լավագույն դաստիարակ» և «Տարվա լավագույն զինղեկ» ավանդական մրցույթների հաղթողները:

Նրանք բոլորն էլ պարգևատրվեցին նաև երևանի «Էդիթ Պրինտ» հրատարակչության արժեքավոր գրքերով:

Երեկոյին մեծ շուք հաղորդեց գեղարվեստական մասը: Հանդիսավոր Նարինե Աղաջանյանն արտասանեց Վ. Հակոբյանի «Ես երգ չունեմ Ղարաբաղի մասին» բանաստեղծությունը: Իրենց կատարումներով ներկայներին հիացմունք պատճառեցին ուսուցիչներին ողջունելու եկած՝ երևանի Յու. Բախշյանի անվան մանկական ֆիլիարմոնիայի «Ստիլ» խմբի կատարողները (գեղ. ղեկավար՝ Նոնա Բաբաջանյան, տնօրեն՝ Սերգեյ Մարգարյան): Ուսուցչի օրվա կապակցությամբ կազմակերպված հանդիսավոր միջոցառմանը գործում մասնակցություն ունենալու և հետաքրքիր ու գեղեցիկ կատարումների համար ֆիլիարմոնիայի տնօրենությունը և խումբը պարգևատրվեցին ԼՂՀ կրթության և գիտության նախարարի շնորհակալագրով:

Սուր և զրիչ. ահա այն մշտական գեները, որոնցով դարեր շարունակ գոյատևում է հայ ժողովուրդը: Մեր ժողովրդի պատմության ամենադաժան ժամանակներում անգամ հայ ուսուցիչը մնացել է իր կոչման բարձրության վրա՝ մշտապես արթուն պահելով ազգային գիտակցության գաղափարը հոգևոր արժեքների պահպանման ու զալիք սերունդներին փոխանցելու անհրաժեշտ գործում: Այս գաղափարն էր իշխում երեկոյի ողջ մթնոլորտում: Օրվա տոնական երանգները հարստացրին գեղեցիկ վարդերը, որոնցով դափլիճից հեռացավ երեկոյի յուրաքանչյուր մասնակից:

Ս. ԽԱԶՆՐՅԱՆ

ՊԱՐԳԵՎՆԵՐ

ՀՐԱՄԱՆԱԳՐԵՐ ՈՒՍՈՒՋՅԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Արցախի Հանրապետության Նախագահ Բակո Սահակյանը Ուսուցչի օրվա առթիվ հոկտեմբերի 4-ին ստորագրել է հրամանագրեր պատվավոր կոչումներ շնորհելու և պետական պարգևներով պարգևատրելու մասին:

Գիտության, կրթության բնագավառների զարգացման գործում ունեցած մեծ վաստակի, մատաղ սերնդի ուսուցման և դաստիարակության ասպարեզում ձեռք բերած ակնառու հաջողությունների համար ԼՂՀ պատվավոր կոչումներ են շնորհվել.

**Գիտության վաստակավոր գործչի՝**  
Ստեփան Դադայանին - Արցախի պետական համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր

**Վաստակավոր մանկավարժի՝**  
Լյուդմիլա Բարսեղյանին - «Ստեփանակերտի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր

**Էդիկ Պետրոսյանին** - Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հաղորդի շրջանի վարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի վարիչ

**Նիկոլայ Սադյանին** - Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի Զափար գյուղի միջնակարգ դպրոցի քիմիայի և կենսաբանության ուսուցիչ

Մատաղ սերնդի ուսուցման և դաստիարակության բնագավառում ունեցած նշանակալի ավանդի համար պարգևատրվել են.

**«Վաչագան Բարեպաշտ» մեդալով՝**  
Արմենուհի Գրիգորյանը - Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Չերիեր գյուղի միջնակարգ դպրոցի աշխարհագրության ուսուցչուհի

**Գրետա Գրիգորյանը** - Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ

**Լիլիկ Հակոբյանը** - Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» ոչ պետական հավատարմագրված համալսարանի հումանիտար ֆակուլտետի դեկան

**«Երախտագիտություն» մեդալով՝**

**Հասմիկ Անտոնյանը** - Մարտունու N 1 միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի

**Էլմիրա Արյանը** - Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջան, գյուղ Նորագյուղ, կենսաթոշակառու ուսուցչուհի

**Այա Մանգասարյանը** - ԼՂՀ Մարտակերտի շրջանի ճանկաթղ գյուղի միջնակարգ դպրոցի տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ, հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի

**Աշոտ Ներսիսյանը** - ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Մշենի գյուղի միջնակարգ դպրոցի տնօրեն

**Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի փոխգլխավորի պաշտոնի վարչություն**

ԼՂՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Ս Ա Ն

«24» սեպտեմբերի 2012թ.

N160/Ս

ք. Ստեփանակերտ

*«Տարվա լավագույն դպրոց», «Տարվա լավագույն ուսուցիչ, լավագույն մանկավարժական փորձ», «Տարվա լավագույն դաստիարակ» և «Տարվա լավագույն զինղեկ» մրցույթների հաղթողներին պարգևատրելու մասին*

Ելնելով ԼՂՀ կրթության և գիտության նախարարության հանրապետական մրցույթային հանձնաժողովի եզրակացությունից՝ *հրամայում եմ.*

1. **«Տարվա լավագույն դպրոց»** մրցույթի արդյունքներով հաղթող ճանաչել Ստեփանակերտի հ. 5 հիմնական դպրոցը և պարգևատրել նախարարության պատվոգրով ու 500 հազար դրամ գումարով:
  - **«Արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների լավագույն դրվածքի համար»** անվանակարգում հաղթող ճանաչել Ասկերանի շրջանի Շոշի միջնակարգ դպրոցը և պարգևատրել նախարարության պատվոգրով ու 150 հազար դրամ գումարով:
  - 2. **«Տարվա լավագույն ուսուցիչ, լավագույն մանկավարժական փորձ»** մրցույթի արդյունքներով հաղթող ճանաչել Մարտակերտի շրջանի Հաթերքի միջնակարգ դպրոցի տնօրեն, հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Ջոյա Իսկանդարյանին և պարգևատրել նախարարության պատվոգրով ու 315 հազար դրամ գումարով:
    - **«Աշակերտների մոտ առարկայի նկատմամբ հետաքրքրություններ զարգացնելու կարողությունը»** անվանակարգում հաղթող ճանաչել Ստեփանակերտի հ. 1 հիմնական դպրոցի քիմիայի և կենսաբանության ուսուցչուհի Իրա Մավրիկի Թադևոսյանին և պարգևատրել նախարարության պատվոգրով ու 158 հազար դրամ գումարով:
    - **«Առարկայի իմացության մակարդակը և նյութը մատուցելու վարպետությունը»** անվանակարգում հաղթող ճանաչել Հաղորդի միջնակարգ դպրոցի ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի Սուսաննա Յուրիի Միրզոյանին և պարգևատրել նախարարության պատվոգրով ու 157 հազար դրամ գումարով:
  - 3. **«Տարվա լավագույն դաստիարակ»** մրցույթի արդյունքներով հաղթող ճանաչել «Ստեփանակերտի հ.2 պետական մանկապարտեզ» ՊՈԱԿ-ի ավագ խմբի դաստիարակ Վեսմիրա Կարապետի Գաբրիելյանին և պարգևատրել նախարարության պատվոգրով ու 100 հազար դրամ գումարով:
    - **«Երեխաների կյանքը հետաքրքիր անակնկալներով հագեցնելու համար» անվանակարգում հաղթող ճանաչել «Մարտունու հ. 1 պետական մանկապարտեզ»** ՊՈԱԿ-ի ավագ խմբի դաստիարակ Գայանե Սերյոժայի Հայրունյանին և պարգևատրել նախարարության պատվոգրով ու 75 հազար դրամ գումարով:
    - **«Սիրտս նվիրում եմ երեխաներին»** անվանակարգում հաղթող ճանաչել Ասկերանի շրջանի «Այգեստանի պետական մանկապարտեզ» ՊՈԱԿ-ի ավագ խմբի դաստիարակ Նարինե Վազգենի Գասպարյանին և պարգևատրել նախարարության պատվոգրով ու 75 հազար դրամ գումարով:
  - 4. **«Տարվա լավագույն զինղեկ»** մրցույթի արդյունքներով հաղթող ճանաչել Ստեփանակերտի հ. 7 հիմնական դպրոցի զինղեկ Վլադիմիր Գրիգորիի Գևորգյանին և պարգևատրել նախարարության պատվոգրով ու 150 հազար դրամ գումարով:
    - **«Ուսումնանյութական բազայի հարստացման և նորարարության համար»** անվանակարգում հաղթող ճանաչել Ասկերանի շրջանի հնամասին միջնակարգ դպրոցի զինղեկ Վլադիմիր Ալեքսանդրի Բարսեղյանին և պարգևատրել նախարարության պատվոգրով ու 100 հազար դրամ գումարով:
  - 5. **Պարգևատրումները կատարել հանդիսավոր կերպով, Ուսուցչի օրը՝ հոկտեմբերի 5-ին:**

ՆԱԽԱՐԱՐ՝ Ս. ԱՍՐՅԱՆ



ՈՒՍՈՒՑՉԻ ՕՐ

# ՇՆՈՐՀԱՎՈՐ ՏՈՆԴ, ՍԻՐԵԼԻ՝ ՈՒՍՈՒՑԻՉ

Ուսուցիչ՝ բառ, որ մեզ տանում է դեպի կրթություն ու գիտություն, դպրոց ու Մ. Մաշտոց, հոգատարություն, քնքշանք ու սեր է նշանակում մեզ համար. նա՛ ունի շնորհիվ մենք դառնում ենք հասարակությանը պիտանի մարդ: Դայ ժողովուրդը միշտ առանձնահատուկ վերաբերմունք է ունեցել ուսուցչի հանդեպ և հարգել նրա աշխատանքը: Ուսուցչի մասնագիտությունն ամենաբարդն է, ամենապահանջվածն ու կարևորը: Ուսուցչին է վերապահված մեր երկրի ապագան, այսօր և միշտ նա է երեխաների հոգում ձևավորում մեր երազած անկախ Արցախի պատկերը: Գիտելիքն ու կրթությունը ամենաթանկ կապիտալն ու առաջընթացի ամենակարևոր նախապայմաններն են: Մենք ապրում ենք գիտելիքի և տեղեկատվության դարաշրջանում: Մեր սերունդների հետագա նվաճումները, ձեռքբերումներն ինչպես մեր երկրում, այնպես էլ նրա սահմաններից դուրս, պայմանավորված են նրանով, թե որքանով ուսուցչին կհաջողվի մեր ապագան կերտողներին տանել տեղեկատվության և գիտելիքի անսպառ հոսքին համընթաց: Պետք է գիտակցենք, որ չունենալով ժամանակակից գիտելիքներով հարուստ և բազմակողմանի զարգացած սերունդ, մենք չենք կարող քաղաքակիրթ ազգերի շարքում ունենալ մեր տեղը և համարժեք արժանություններ մարտահրավերներին:

Ուսուցիչն է, որ ստանձնել է բարձր պարտականություն՝ օգնել իր երկրի սերունդներին պահպանվել որպես բնության ստեղծած տեսակ, մնալ հայ ու ձգտել մտքի, հոգու ու մարմնի կատարելության: Ուսուցիչն է երկրի պատմությունը ստեղծողը, մշակույթի, լեզվի ու սովորույթների ամրապնդողն ու տարածողը: Յուրաքանչյուր մարդու մոտ կա ուսուցչի մի մասն ու գաղափարը, ապրումներն ու կարողությունը: Եվ իր կերպարով խտացնում ու ամբողջական է դարձնում ապրած ժամանակը: Ուսուցչի աշխատանքից է կախված մեր վաղվա օրը, հույսի ու երազի չափը: Իզուր չէ ասված՝ հանձարն անգամ ուսուցիչ է ունեցել...

«Երեխաներին դաստիարակող ուսուցիչը հարգանքի է արժանի ավելի՝ քան ծնողը, ում երեխան պարտական է լոկ իր ծնունդով. մեկը մեզ կյանք է պարգևում, մյուսը՝ արժանավոր կյանք»: արիստոտելյան այս տողերը պատահական չեն ծնվել: Իրոք, ուսուցիչ լինելը մեծ կոչում է, առավել ևս, երբ ուսուցիչը ոչ թե պարզապես մատուցում է ծննդատվությունը, այլ իր սաներին սովորեցնում է գտնել այլն:

Ուրեմն՝ եկեք մեկ անգամ ևս խոնարհվենք մեր ուսուցիչների առջև, հարգենք նրանց հայրենանվեր և ազգապահպան առաքելությունը, խոստովանենք, որ մանկավարժի աշխատանքը ամենապատասխանատուն և ամենաբարդն է, քանզի նրանց կրթած ու դաստիարակած աշակերտը վաղը դառնալու է մեր ազատ ու անկախ Արցախի կերտողը: Նրանք են, որ լուռու-մուռ, ի գին ամեն զրկանքի, ուսերին կրում են մեր ժողովրդի ամբողջականության, ազգային արժեքների լիարժեք պահպանման, մեր ժողովրդի անպարտելիության ու կեցության գաղտնախորհուրդ հավատքի սերնդներունը ներարկումը: Մենք քաջ գիտակցում ենք, որ մեր դպրոցի առջև այսօր դրված է բավականին լուրջ խնդիր՝ արցախցու դպրոցում պետք է բազմակողմ չորս պաշտամունք՝ հայրենիք, մեծատառով մարդ, մայրենի լեզու, հավատք:

Արցախ աշխարհի սիրելի ուսուցիչներ, հայրորդիների դաստիարակության հայրենանվեր ու անձնուրաց գործի անդուլ մշակներ, ի խորոց սրտի շնորհավորում են ձեզ ամենատարողունակ և ամենամարդկային մասնագիտական օրվա՝ Ուսուցչի տոնի առթիվ:

Թույլ տվեք ձեզ ցանկանալ, որ սերունդ կրթելու բարձր ու վեհ կոչմանը հավատարիմ մնաք, որ ձեր սաները միշտ հիշեն ձեզ ու հպարտանան, որ իրենց նաև կյանքի դասեր եք տվել: Միշտ ժպտացեք, եղբք առողջ, բարի ու համբերատար, զեղեցիկ ու հմայիչ, թող երկար լինի ձեր կյանքը...

**Գ. ՍՏԵՓԱՆՅԱՆ**  
ԿԱԻ մասնագետ

# ԱՄԵՆԱԿՐԱՇԱԼԻՆ ԴԵՌ ԱՌՋԵՎՈՒՄ Է



Ուսուցչի մասնագիտական տոն օրի կապակցությամբ ուզում են մեծարման խոսք ու խորին հարգանքս հղել Ասկերանի էդմոն Բարսեղյանի անվան միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Ամալյա Շիրոյանին:

Երանի նրան, ով աշակերտել է ընկեր Շիրոյանին, լսել նրա անուշ ձայնը, որը չգիտես՝ մայրական օրո՞ր է, սոխակի դայլայլ, թե՞ հզոր մարտակոչ... Մի հարուստ խառնվածք, ով իր կնիքն է թողել իր ձեռքի տակով երան-երան անցած սերունդների վրա, ով միշտ բարձր է դասել ձևավորված որակներից ամենավեճը՝ մարդկայինը: Մանկավարժական հոտառությամբ իսկույն որսում է, թե ինչ մարդ է դիմացինը, ինչպիսին են երեխայի ներքին ապրումները, ինչ ազդեցություն ունեն դրանց վրա արտաքին ազդակները: Ինչպես իսկական գրողն է կարողանում ճիշտ ու գունեղ արտահայտել ժամանակի շունչն ու ոգին, այնպես էլ ընկեր Շիրոյանը՝ որպես գրականության հմուտ մասնագետ, գիտի իր անելիքը:

Նրա հզոր զենքն իր լեզուն է, անաղարտ մայրենին, միշտ տեղին, հատու, ազդեցիկ, գերող ու կախարհիչ: Չափազանց նուրբ ու զգայուն, համեստ ու կոկիկ: Չգի-

տես համեմատել նրան շառագունած մայրամուտի՞, թե՞ արևածագին բոցկլտացող արեգակի հետ: Նրա բերանից կարող է հզոր հեղեղ դուրս գալ կամ իջնել խաղաղ երեկո, աշման գույներով վարպետորեն նա բնանկար կարող է կերտել, որ քեզ թվա, թե հեռվի տանձին կարմրել է ամոթից, լսել բնության ձայները, տեսնել ծիածանի բոլոր գույներն ու գայթակղվել ու հագենալ... Այդպիսի խոսքի վարպետ է նա՝ կանչող, սառնորակ, քչքչան աղբյուր, որ կանչում է բոլոր լսողներին ու ծարավներին...

Ամալյա Շիրոյանը ծնվել է 1952թ. հուլիսի 21-ին, Էջմիածնի շրջանի Մուսալեռ ավանում: 1957թ. ընդունվել է տեղի միջնակարգ դպրոցը: 9-րդ և 10-րդ դասարանները սովորել է Երևանի Ե. Չարենցի անվան միջնակարգում: 1971թ. ընդունվել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը, ավարտելով՝ աշխատանքի է անցել Ակնալճի դպրոցում:

1976թ. ամուսնացել է տեղափոխվել է Լեռնային Ղարաբաղի Ասկերան քաղաքը և մեր դպրոցում էլ աշխատում է մինչև հիմա՝ վայելելով գործընկերների ու աշակերտների սերն ու հարգանքը:

Դայ մեծանուն բանաստեղծ Դովի. Շիրոյանը, լսելով ընկեր Շիրոյանին, նրա մեջ տեսել է այն կայծը, որը եթե բոցի չվերածվի, համեմայնդեպս, նրան ամուր կկապի հայ գրականությանը:

Աշխատանքային բեղուն գործունեության ընթացքում ուժ ու ջանք չի խնայում, նվիրումով է կատարում իր առաքելությունը՝ մատաղ սերնդի առջև բացելով գրականությանն հարուստ գանձարանի դռները:

Լինելով այդքան հուզառատ՝ չեմ հիշում դեպք, որ նա ավերից դուրս գա թեկուզ անգուշաբար, երբեք չի վիրավորել մեկին: Գիտի լսել ու հարգել դիմացինի կարծիքը:

Դժվարանում են ասել, թե որն է ընկեր Շիրոյանի սիրած գրողը: Ամեն գրողի կյանքն ու ստեղծագործությունն անցնելիս այնպես էր թվում, թե հենց այդ գրողին է նախապատվություն տալիս նա:

Ինձ համար ընկեր Շիրոյանի սիրած գրողը Ջոհրապետ է, այդ դասերին չէիմք ուզում, որ զանգը հնչեր, նա հմուտորեն այնպես էր անում, որ պապակ հոգիդ չհամբերեր մինչև հաջորդ դասը, այլ ինքդ ընթերցես և իմանաս ամեն ինչ:

Լավ մանկավարժ լինելուց բացի նա նաև լավ հոգեբան է, հավասարաչափ է ժպտներն ու գովեստները բաշխում դասարանում: Սոխալում է, որ աշակերտները սրտացավ ու կարեկից լինեն միմյանց հանդեպ:

Ոգևորում է այնպես, որ դասարանում յուրաքանչյուրը կարծում է, թե դա հենց իրեն է ուղղված: Կարծես ընկեր Շիրոյանի մասին է ասված՝ «Կինը գաղտնիք է մի ողջ տիեզերքի»: Պետք չէ բացահայտել նրա գաղտնիքը, ընդունենք այնպես, ինչպես նա կա: Լավ մանկավարժ, լավ գործընկեր լինելուց բացի Ամալյա Շիրոյանը սիրատուն մայր է և հոգատար կին, ընտանիքում դաստիարակել են երեք երեխաների՝ խելք ու համեստ:

Ուսուցչի օրվա կապակցությամբ կրկին ուզում են իմ խորին սերն ու հարգանքն արտահայտել, գլուխ խոնարհել նրա գործունեության առաջ: Ցանկանալով առողջություն, ուժ ու կորով, եռանդ՝ հավատարմով, որ ամենահարաշալիս դեռ առջևում է...

Գալիք տարիները թող ավելի խիճո՞ ու բերկրանք բերեն Ձեզ...

**Մելանյա ՍԱՐԳՍՅԱՆ**  
Ասկերանի է. Բարսեղյանի անվան միջն. դպրոցի ուսուցչուհի, ՄԿ կազմակերպիչ

# ԵՐԱՆՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ՝ ՄԱՆԿԱՎԱՐԺ ՄՈՐԱ

Իմ ապագան կարող էր նախանձելի ու պայծառ լինել, կարող էր նաև միապաղաղ լինել: Ամեն ինչ կախված է ճակատագրի բարեհաճությունից, կյանքի բնականոն ընթացքից, նաև ճիշտ ապրելուց: Գիշտ ապրել՝ իմ համոզմամբ, ազնիվ ճանապարհով աշխատելն ու բարոյություն շռայլելն է, որը դուք եք իմ մեջ սերմանել, սիրելի ուսուցիչներ: Մտքով սլանալով երկինք՝ սկսեցի թերթել անցյալում թողած անմոռաց հուշերը և կարոտով սավառնել դեպի անցյալը, որը շատ դառն էր (պատերազմական տարիներ)...

Վերջին գանգի օրն էր, երբ առաջին անգամ ես զգացի, թե ինչքա՛ն թանկ ու ինչքա՛ն դժվար է բաժանումը: Այդ օրը մենք հրաժեշտ էինք տալիս մեր սիրելի ուսուցիչներին, որոնք անմնացորդ գիտելիքներ են շռայլել մեզ: Իմ հրաժեշտի խոսքերն ուղղված էին իմ առաջին ուսուցչուհի ընկեր Աղելա Մնացականյանին և հայոց լեզվի ու գրականության ուսուցչուհուն՝ մորս՝ Սուսաննա Գալստյանին: Իր ջերմ մաղթանքներով հանդես եկավ ուսուցչուհին, իսկ վերջում արտասանեց բանաստեղծություն՝ նվիրված «Աղջկաս՝ Նարինեին» (ինձ).

Դու որքան անկործ, նույնքան միամիտ, Որքան կուզեի լինես խելամիտ, Շուտ ես վստահում դու դիմացինիդ, Սիրուն ու անմիտ, իմ փոքրիկ աղջիկ:

Եղիդ քիչ զգո՞մ, դատրիկ մրահո՞մ,

Քիչ եղիր քնքուշ, խոսքերով՝ անուշ  
Սիրտդ թող թնդա ո՞նց որ երգեհոն,  
Իմ խելառ, փոքրիկ ու սիրուն աղջիկ:

Թող վարդ, մանուշակ զուգեն քո ուղին,  
Թող աղավնիներ ճախրեն քո կտրին,  
Թող կյանքում քեզ միշտ ուղեկցի բարին  
Քո երազանքին հասնես հեշտ, դյուրին:

Գուցե հասկանաս դու քո մայրիկին,  
Երբ ծնող դառնաս, լինես տանտիկին,  
Անշուշտ, կզգաս, աղջիկ իմ անգին՝  
Ո՞նց ես չարչարել քո խելճ մայրիկին:

Երբ նրա աչքերում արցունքներ նկատեցի, ես էլ ազատություն տվեցի հույզերին: Մոռացա սրտիս խոսքերը, որոնք այդ պահին ասես կորցրին իրենց կարևորությունը: Արցունքներս սրբելով իջա բեմից, նրան ծաղկեփունջ նվիրեցի, գրկախառնվեցի ու մանկացա նրա գրկում: Իմ արցունքները շարունակում էին հոսել: Եվ այդ ժամանակ ես մեծ կարևորություն տվեցի ուսուցչի գործին, ծով համբերությամբ և ընտրեցի հենց ուսուցչի մասնագիտությունը՝ աշակերտական քաղցր հուշերիս ժապավենը զլորելով: Գիտե՞մ, որ մարդու համար անհնարին ոչինչ չկա, նա ստեղծում է ամեն ինչ՝ իր նպատակին հասնելու համար: Երազանքներս իրականացան՝ հասա նպատակիս: Այժմ աշխատում եմ ինձ համար հարազատ դարձած կրթօջախում: Ուսուցման փորձում շնորհակալ եմ բոլոր ու-

սուցիչներին, բոլորն էլ հուշերիս մեջ են ու միշտ կմնան: Նրանցից յուրաքանչյուրն իրենցով լցրել է հոգուս մի անկյունը: Յուրաքանչյուրը մի հետք է թողել իմ կյանքում:

Ուսուցիչներ, բանիմաց, խոհեմ, ներդամիտ, երբ դաս էիք բացատրում, ձեր թավշե ձայնը ասես շոյում էր իմ մանուկ հոգին:

Սիրելի ուսուցիչներ, շնորհավոր ձեր տոնը, ամեն տարի այս զեղեցիկ աշնանային օրը վերածվում է մի տեսակ իմաստության տոնի, դպրոցական տարիների վերհիշման, բարի ուսուցիչների արած-թողածի գնահատման տոնի: Չգիտե՞մ որ մեկին գովաբանեմ, ձեր բարի խորհուրդները երբեք ուշ չեն ինձ համար:

- Ուսուցչուհի մայրիկ, շնորհավոր տոնդ, թող օրը սկսվի ծիծաղով և ավարտվի ծիծաղով, քանզի ծիծաղից ու սրտի բարությունից են ծնվում հայրենասեր սաներ:

Առիթից օգտվելով՝ ի սրտե շնորհավորում եմ ԼԴԳ հանրակրթական հաստատություններում դասավանդող, ինչպես նաև թոշակառու բոլոր ուսուցիչներին՝ մաղթելով անձնական հաջողություններ, առողջություն և բեղմնավոր աշխատանք: Թող Աստվածային օրհնությունը լինի բոլորիդ ուղեկիցը:

**Նարինե ՀԱՅՐԻՅԱՆ**  
Սրբեկ. հ. 12 հիմն. դպրոցի կազմակերպիչ



ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԺՈՂՈՎՈՐԴ

ԱՅՅ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ

Երեք և ավելի երեխա ունեցալը մեր հայ ընտանիքների համար այժմ դարձել է հազվագյուտ երևույթ, իսկ բազմազավակ ընտանիք կոչվածը, չգիտես ինչու, նշանակում է սոցիալապես անապահով: Այսօր Քաշաթաղի շրջանի տարբեր բնակավայրերում կան բազմազավակ ընտանիքներ, որոնց մասին միշտ էլ հոգ է տարվում կառուցվում են բնակարաններ, հատկացվում է անասնավարկ, այլ հունանիտար օգնություններ: Կարևոր է «Գուրգեն Մելիքյանը՝ Քաշաթաղի շրջանի բազմազավակ ընտանիքներին» հիմնադրամի գործունեությունը: Վերջերս շրջվարչակազմի աշխատակազմի սոցալվարչության պետ Վարդան Բաղդասարյանի հետ այցելեցինք Իշխանաձորում և Հայկազյանում բնակվող բազմազավակ ընտանիքներին՝ ծանոթանալու նրանց խնդիրներին, հոգսերին: Արթուր Հակոբյանի և Ռուզաննա Գաբրիելյանի ընտանիքը բնակվում է Իշխանաձորում, ունեն 5 երեխա: Մեծը՝ Դավիթը, սովորում է Իշխանաձորի Հոգևոր թանգարանի միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանում, նրա քույրերը՝

Աննան՝ 6-րդ, Մանեն՝ 3-րդ: Բոլորն էլ կարգապահ և լավ սովորող աշակերտներ են: Նրանց փոքր եղբայրը՝ Ալեքսը, ծնվել է այս տարվա հունվարին. մեծերը սիրում են նրան և մոր

ջերս է ծնվել: Մեծ աղջիկը՝ Լաուրան, սովորում է առաջին դասարանում. սիրում է իր ուսուցչուհուն, դպրոց հաճախել և որոշել է ամպայման դառնալ ատամնաբույժ: Լսելով Լաուրա-

վիճակում: Նախատեսված է նորը կառուցել: 6 և ավելի երեխա ունեցող ընտանիքների համար պետության կողմից տուն է կառուցվում: Կարինե Ներսիսյանը 12 երեխայի մայր է, բնակվում է Հայկազյան համայնքում: Փոքր աղջիկը՝ Արփինեն, 4 տարեկան է: Մեծը՝ Ռուստամ որդին, ամուսնացած է, ունի մեկ երեխա. մեր այցի ժամանակ Ռուստամը գտնվում էր հանրապետության և զորամասում՝ մասնակցում է ուսումնական զորավարժաբերքին: Կարինեի ընտանիքի համար պետության կողմից բնակարան է կառուցվել: Ինքն էլ, երեխաներն էլ զոհ են, սակայն մայրն անհանգստացած է Ռուստամ որդու ընտանիքի համար, որ չունեն կարգին բնակարան: Խոնավ ու ոչ բարվոք վիճակում է, որի պատճառով թոռնիկը հաճախ հիվանդանում է: Այցի ընթացքում նշված և ևս երկու բազմազավակ ընտանիքների հատկացվեց նաև «Գուրգեն Մելիքյանը՝ Քաշաթաղի շրջանի բազմազավակ ընտանիքներին» հիմնադրամի կողմից տրամադրված հազուստ:



բացակայության դեպքում խնամք տանում: Իրենց սեփականը չունենալու պատճառով առայժմ բնակվում են ուրիշի տանը: Լենա Մարգարյանը 24 տարեկան է, ունի 5 աղջիկ՝ Լաուրա, Մարիամ, Միլենա, Լիանա, Էլեն և մեկ որդի՝ Արեմը, որ վեր-

յին, գրուցելով ժպտերես ու գեղեցիկ աչքեր ունեցող այս աղջնակի հետ՝ հավատում ես, որ կիրականանա նրա երազանքը: Երեխաների հայրը՝ Մանվելը, աշխատանքի էր: Ընտանիքի հոգատարությամբ զբաղվում է նաև պապը՝ Սաշա Բաբայանը: Տուն ունեն, սակայն ոչ բարվոք

ՈՐ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՇՏ ԲԱՐԻ ԼԻՆԵՆ...

Ամառը միշտ էլ յուրօրինակ հետք է թողնում բոլորիս վրա, հաճելի հիշողություններ, որոնց տաք շնչով ջերմանում ենք անգամ ցուրտ ձմռանը: Իսկ թվականիս ամառը մի առանձնահատուկ հիշողություն կդառնա Ասկերանի շրջանի Կարմիր գյուղի միջնակարգ դպրոցի ուսուցիչների համար: Թվականիս հունիս ամսին արհմիության նախագահ Գայանե Գաբրիելյանի նախաձեռնությամբ փոքրիկ, բայց բավականին բովանդակալից շրջագայություն կազմակերպվեց դեպի Մայր Հայաստան: Չնայած սեղմ ժամանակին, կարողացանք հյուրընկալվել չքնաղ Ծաղկաձորում՝ վայելելով յուրքանաչյուր պահն ու վայրկյանը: Շատ տպավորիչ էր Կեչառիսի վանքը, որի ամեն մի քար մեր դարավոր պատմության գաղտնիքներն ունի պահած, ու դեռ դարեր-դարեր որպես անխոս վկա կհյուրընկալի սերունդներին: Մեզանից շատերը վաղուց է, ինչ քաղաքամայր Երևանում չէին եղել, մի փոքրիկ շրջայց էլ կատարեցինք աշխարհի ամենավարդազույն քաղաքում, համակվեցինք ուսանողական տարիներից մնացած հաճելի հիշողություններով: Հասցրինք տեսակցել գեղեցկուհի Սևանին, որը դեպի իրեն է ձգում աշխարհասփյուռ հայությանը: Զգիտեմ ով ինչպես, բայց ես աշխարհի ամենամեծ ծովերի հետ անգամ չեմ փոխի իմ այդ աղանձալի պես փայլող գանձ-Սևանը, որտեղ, ինչպես Սևակը կասեր՝ երկինքն իր ճիշտ պատճենն է հանում: Առանց այն էլ կարճ ժամանակը արձակված նետի պես թռչում էր, յուրաքանչյուր տեղից կտրվելը բավական դժվար էր, բայց դե, ինչ արած, հետդարձի ճանապարհը մեզ էր սպասում: Այո, վերադառնում էինք, սակայն սա դեռ ամենը չէր, ճանապարհին մեզ սպասում էր Տաթևը՝ աշխարհի ամենաերկար իր ճոպանուղով, իր ողջ հմայքով ու վեհությամբ: Նայում էի այդ հրաշքին ու մտածում՝ Տաթև՝ և նման շուք հաղորդում տեղանքին, թե՞ հակառակը, բայց համոզվեցի այն է, որ մարդ և բնություն այստեղ գործել են չափազանց ներդաշնակ, ու յուրաքանչյուր կարծես թե վախենում էինք մեր անգամ քայլով խաթարել այդ ներդաշնակությունը, այն հաշտությունը, որ առկա էր մարդու և բնության միջև: Անկեղծ ասած, ամբողջ ճանապարհին մտածում էի, թե կիրառվեմ նստել ճոպանուղին, կվախենամ, բայց ինձ նման մտածողներին շտապեմ հավատացնել, որ վախենալու ոչինչ չկա, հմայվելով բնությանը, չես էլ հասցնում աչքը թարթել ու անգամ հպարտությամբ ես համակվում, որ աշխարհի ամենաերկար ճոպանուղին քո հայրենիքում է: Ամեն ինչ հիասքանչ էր, տպավորությունները՝ վառ, հիշողությունները՝ թանկ, մեր ամեն մի քայլ հավերժացավ լուսանկարչական ապարատով և կզանցվեց տեղի զբաղեցնելու կենսագրություն կոչվող մեր արխիվում: Արդեն քանի ամիս է անցել, բայց դեռ շարունակում ենք վերհիշել, քննարկել, թե ինչ բաց թողեցինք, ինչ հասցրինք՝ համալրումը թողնելով, իհարկե, գալիքին: Այդ ամենը հնարավոր չէ թղթին հանձնել, կան բաներ, որ ասելու համար չեն, այլ զգալու: Վստահ եմ, որ այս նյութն ընթերցելով, իմ գործընկերների մոտ կարթնանան հենց չգրված բառերի քաղցր զգացումներ: Իսկ վերջում կուզենայի իմ երախտագիտության խոսքն ուղղել տիկին Գաբրիելյանին, ով մեծ նվիրումով մեզ գեղեցիկ ամառային օրեր պարգևեց՝ մի քանի օր կտրելով առտնին հոգսերից:

ԱՄՐԱՊՆԴՎՈՒՄ Ե ԴՊՐՈՅ-ԲԱՆԱԿ ԿԱՊԸ

Վաղը ազգովին պիտի հնձենք այն, ինչ սերմանում ենք այսօր:

Գարեգին Նժդեհ

Այսօր մեր ազգային դպրոցի գլխավոր խնդիրներից է աշակերտների ռազմախորհրդարանական դաստիարակությունը, հայրենիքի պաշտպանության սուրբ գործին եռանդուն օժանդակելը: Հայրենասիրական դաստիարակության իրականացման հնարավորություններն անչափ շատ են դպրոցում: Ռազմախորհրդարանական դաստիարակության և զինվորականի մասնագիտության հանդեպ հետաքրքրություն ապահովելու նպատակով աշակերտներին հաճախակի ենք մասնակից անում մեր շեֆ-գործարանի (N 37221) զինվորների հետ համատեղ միջոցառումներին: Այդ նպատակին ծառայեց մեր այցելությունը ինժեներասակրավորական գումարտակ՝ շնորհավորելու անձնակազմին ՀՀ անկախության 21-րդ տարեդարձի առթիվ: Մեզ անցրեցին 21-ի տոնակա օրն առավոտյան հ. 5 հիմնական դպրոցի մի խումբ աշակերտներ զինվորի, ուսուցիչներ Ս. Դադայանի և Ա. Հարությունյանի ուղեկցությամբ ուղևորվեցին դեպի գործարան: Արդեն դարպասի մուտքից զգացվում էր հայրենասիրության շունչը: Մեզ էին նայում մեր ազգային հերոսները՝ Հայկ Նահապետը, Տիգրան Մեծը, գործավար Անդրանիկը, Մոնթե Մելքոնյանը, սպարապետ Վ. Սարգսյանը, Յու. Պողոսյանը: Նրանք կարծես իրենց պատգամն էին հղում աշակերտներին, որ լավ սովորեն, սիրեն հայրենիքն ու մայր լեզուն, միշտ պատրաստ լինեն հանուն հայրենիքի անձնագրության: Ահա մենք մոտեցանք գումարտակի

իրապարակին, որտեղ մեզ դիմավորեց սպաների, ենթասպաների, զինվորների կառնավոր շարասյունը: Պատշաճ մակարդակով անցավ միտինգը՝ նվիրված ՀՀ անկախության 21-ամյակին: Մեր դպրոցի սաները և շնորհավորեցին տոն օրվա առթիվ: Նրանց երգը և ասմունքը համեմված էին հայրենասիրական վեհ գաղափարներով: Միտինգի վերջում գումարտակի իրամանատար Ռ. Գալստյանը շնորհակալություն հայտնեց և նվերներ հանձնեց աշակերտներին՝ պատգամելով լավ սովորել, որպեսզի հետագայում դառնան հայրենիքի արժանի զավակներ: Նմանատիպ այցելություններն իրենց յուրահատուկ ազդեցությունն են թողնում նաև զինվորների վրա: Նրանք ոգեշնչվում են հայ երեխաների հայրենաշունչ արտասանությամբ և ավելի տոգորվում հայրենասիրական բարձր զգացումներով: Նրանց դեմքերից զգացվում էր գոհունակություն և պարտավորվածություն հայրենիքի, հայ ժողովրդի, հայ մանուկների պաշտպանության հանդեպ: Միտինգից հետո փոքրիկ էքսկուրս կատարվեց: Կապիտան Ս. Հովսեփյանը աշակերտներին ցույց տվեց գումարտակի տեխ-

նիկան, բացատրեց նրանց գործածության ձևերը: Նա կարևորեց նման միջոցառումները՝ առաջարկելով, որ դրանք լինեն շարունակական և հաճախակի, որովհետև հայ երգը միշտ արթուն է պահում զինվորի ոգին: Նմանատիպ միջոցառումները նպաստում են նաև աշակերտների մասնագիտական կողմնորոշմանը: Այս հանդիպումից հետո աշակերտներից շատերը (այդ թվում և՛ աղջիկներ) ցանկություն հայտնեցին իրենց ուսումը շարունակել ռազմական ուղղությամբ: Մեջբերեմ նրանցից մի քանիսի խոսքը. - Վեհ է այն զգացումը, ինչ ունեցա ես, երբ սեպտեմբերի 21-ին՝ մեր մայր հայրենիքի անկախության օրը, այցելեցինք շեֆ-գործարան: Ես հասկացա և համոզվեցի իմ հետագա մասնագիտության ընտրության մեջ. կդառնամ հայրենիքիս արժանի ու նվիրյալ զավակը: Ավարտելով հիմնական դպրոցը՝ կընդունվեմ գեներալ Իվանյանի անվան ռազմական վարժարան, այնուհետև կշարունակեմ ուսումս և կհասնեմ իմ նպատակին (Արման Միրզաջանյան, 9-րդ «բ» դասարան): - Յուրաքանչյուր այցելության ժամանակ ես անսահման հպարտություն եմ ապրում, որ ունենք այսպիսի հզոր և հաղթական բանակ: Եվ օրեցօր ինձ մոտ արմատավորվում է խորանում է գերազույն նպատակ՝ լինել այդ հաղթական բանակին արժանի սպա: Ու որպեսզի իրականանա իղծս, ես լավ կսովորեմ, պարտաճանաչորեն կկատարեմ իմ առջև դրված բոլոր առաջադրանքներն ու խնդիրները (Գրիգորի Հովհաննիսյան, 9-րդ «ա» դասարան):



Մարինե ԽԱՉԱՏՐՅԱՆ Սպեց. հ. 5 հիմն. դպրոց, ՄՎԱՊՏՏ

Գ. ԽԱՉԱՏՐՅԱՆ Կարմիր գյուղի միջն. դպրոցի ուսուցչուհի

# ԶՐՈՒՅՑՆԵՐ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԼԵՈՆԱՐՊՈ ՊԻՉԱՆՈ (ՖԻԲՈՆԱՉԻ)



Լեոնարդո Պիզանո (Ֆիբոնաչի)  
Միջնադարի մեծագույն մաթեմատիկոս

Լեոնարդո Պիզանոն (Պիզայեցի) (լատիներեն՝ Leonardo Pisano) միջնադարյան Եվրոպայի առաջին խոշոր մաթեմատիկոսն էր։ Ավելի շատ նա հայտնի է Ֆիբոնաչի (Fibonacci) անունով։ Այս անվան ծագման պատմության շուրջ կան տարբեր վարկածներ։ Ըստ առաջին վարկածի, նրա հայրը՝ Գիլերմոն, հայտնի էր Բոնաչի («անձնվեր») անունով, իսկ ինքը՝ Լեոնարդոն, կոչվեց filius Bonacci (բառացիորեն՝ բարձրանած՝ «անձնվերի որդի»)։ Ըստ մյուս վարկածի՝ Fibonacci-ն ծագում է Figlio Buono Nato Ci արտահայտությունից, որը բարձրանաբար նշանակում է «ծնողին արժանի զավակ»։ Ֆիբոնաչիի ծննդյան ճշգրիտ թվականը հայտնի չէ։ Ընդունված է համարել, որ ծնվել է 1170թ., մահացել՝ 1228թ.։ Ենթադրվում է, որ նա զոհվել է Ֆրիդրիխ Գոգենտաուֆեն կայսեր ղեկավարած խաչակրաց արշավանքներից մեկի ժամանակ։ Կայսր Ֆրիդրիխ Գոգենտաուֆենը, մեծանալով Սիցիլիայում և կրթվելով արաբական դպրոցներում, պաշտոն էր արաբական մշակույթը։

Գիլերմո Բոնաչին այդ ժամանակներում Պիզայում ապրող իտալական մեծահարուստներից մեկն էր։ Պիզա քաղաքն այդ տարիներին իսլամական Արևելքը Եվրոպային կապող խոշորագույն առևտրական կենտրոնն էր։

Գնահատելով արաբական մշակույթը՝ Գիլերմո Բոնաչին իր զավակին՝ Լեոնարդոյին, ուղարկեց Սիցիլիա կրթվելու տեղի արաբական մաթեմատիկոսների (հորեզմի, Աբու Քամիլ) դպրոցում։ Այստեղ Լեոնարդոն ուսումնասիրեց ոչ միայն արաբական, այլև անտիկ և հնդկական գիտնականների աշխատությունները։ Նա գրել է ընդամենը երեք նշանակալից աշխատություններ։

1202թ. Ֆիբոնաչին հրատարակեց իր հայտնի «Գիրք արաբի մասին» (լատիներեն՝ «Liber Abaci») գիրքը։ Այն պարունակում էր այդ ժամանակաշրջանի թվաբանության ու հանրահաշվի վերաբերյալ գրեթե բոլոր տեղեկությունները՝ լրիվությամբ ու խորությամբ։ Ֆիբոնաչին Եվրոպային ներկայացրեց բոլոր ժամանակների մեծագույն հայտնագործություններից մեկը՝ հաշվման տասնորդական համակարգը, ներառելով գրոյի տեղը որպես թվային շարքի գրության առաջին թիվ։ Այդ համակարգը, որը պարունակում է սովորական 0, 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9 սիմվոլները, հայտնի դարձավ որպես հնդկական-արաբական համակարգ և այժմ օգտագործվում է ամենուրեք։ Չնայած հազարավոր տարիներ առաջ բարելոնցիները և մայաները Կենտրոնական Ամերիկայից իրարից անկախ հայտնագործել էին հաշվարկի թվային համակարգ, նրանց մեթոդները հարմար չէին այլ առումներով։ Այդ պատճառով բարելոնցական համակարգը, որն առաջինն էր օգտագործել գրոն թվերի շարքում, չի մտել ոչ հունական, ոչ էլ հռոմեական համակարգերը, որոնց համարակալումները պարունակում էին ոչ թվային յոթ սիմվոլ՝ I=1, V=5, X=10, L=50, C=100, D=500 և M=1000։ Գունարումը, հանումը, բազմապատումը և բաժանումը այդ ոչ թվային սիմվոլները պարունակող համակարգում դառնում էին դժվար խնդիր, հատկապես երբ օգտագործում էին մեծ թվեր։ Անհասկանալի է, բայց որպեսզի լուծեն այդ խնդիրը, հռոմեացիները օգտագործում էին շատ հին հաշվիչ սարք, որը հայտնի էր արևելքում և իր մեջ պարունակում էր հարյուրավոր (արևելքում, արևելքում (հուն. -

տախտակ) - հաշվիչ տախտակ Հին Հուլիանաստանում և Հռոմում, ապա Արևմտյան Եվրոպայում՝ մինչև XVIII դ.։ Քանի որ այդ սարքը հինմակում էր թվերի վրա և իր մեջ պարունակում էր գրոնալի (Practica geometriae, 1220), պարունակում էր չափման մեթոդների վերաբերյալ տարբեր բերդներ։ Դասական արդյունքների հետ մեկտեղ Ֆիբոնաչին բերում է իր սեփականը,

կլում էր գրոյական սկզբունքը, գործում էր որպես հռոմեական հաշվարկման համակարգին անհրաժեշտ լրացում։ Ֆիբոնաչին իր ճանապարհորդությունների ընթացքում սկսեց օգտագործել իր նոր համակարգը։ Նրա ջանքերի շնորհիվ նոր համակարգը՝ իր հաշվարկի պարզ եղանակով, ի վերջո, տրվեց Եվրոպային։ Աստիճանաբար, հռոմեական թվերի օգտագործումը փոխարինվեց արաբական թվային համակարգով։ Եվրոպայում այդ թվերն անվանեցին արաբական թվեր, քանի որ անցել էին արաբներից։ Նոր համակարգի մտցումը Եվրոպայում ավելի քան յոթ դար առաջ Հռոմի անկման պահից առաջին կարևոր ձեռքբերումն էր մաթեմատիկայի բնագավառում։ Ֆիբոնաչին ոչ միայն պահպանեց մաթեմատիկան միջնադարում, այլև բարձրագույն մաթեմատիկայի և նրա հետ կապված ֆիզիկայի, աստղագիտության և մեթոմաշինության երկարատև զարգացման (Եվրոպիայի) հիմքը դրեց։ Ֆիբոնաչիի համբավը տարածվել էր ողջ Եվրոպայում։ Նա այնքան նշանավոր էր, որ Ֆրիդրիխ II, իրավամբ, բնագետն ու գիտնականը, կազմակերպեց ճանապարհորդություն դեպի Պիզա։ Ֆրիդրիխ II-ը Սուրբ Հռոմի կայսրն էր, Սիցիլիայի և Երուսաղեմի թագավորը, Եվրոպայում ու Սիցիլիայում հայտնի էր նրա ընտանիքների ժառանգորդը, իր ժամանակի հզորագույն տիրակալը։ Հանդիպումը Ֆիբոնաչիի և Ֆրիդրիխ II կայսեր միջև տեղի ունեցավ 1225թ. և կարևոր իրադարձություն էր Պիզա քաղաքի համար։ Որոշ խնդիրներ, որոնք կայսեր կողմից դրվեցին հայտնի մաթեմատիկոսի առջև, մանրամասնորեն շարադրված են «Գիրք արաբի մասին» գրքում։ Ֆիբոնաչին, ակնհայտ է, լուծել էր կայսեր կողմից դրված խնդիրները և ընդմիջտ դարձավ արքունիքի ցանկալի իշխոր։ Երբ Ֆիբոնաչին 1228թ. խմբագրեց «Գիրք արաբի մասին» գիրքը, այն նվիրեց Ֆրիդրիխ II-ին։ Չնայած աշխարհը հետագայում համարյա իր տեսադաշտից կորցրեց Ֆիբոնաչիին, նա, անկասկած, իր ժամանակի մարդն էր։

«Գործնական երկրաչափությունը» (Practica geometriae, 1220), պարունակում է չափման մեթոդների վերաբերյալ տարբեր բերդներ։ Դասական արդյունքների հետ մեկտեղ Ֆիբոնաչին բերում է իր սեփականը,

որինակ՝ այն պնդման ապացույցը, որ եռանկյան երեք միջնագծերը հատվում են մի կետում (Արքիմեդիս այդ փաստը հայտնի էր, բայց եթե անգամ նրա ապացույցը գոյություն ուներ, մեզ չի հասել)։

«Քառակուսիների գիրքը» (Liber quadratorum, 1225) պարունակում է մի շարք քառակուսի հավասարումների վերաբերյալ խնդիրներ։ Դրանցից մեկում՝ առաջարկված Իոհան Պալերմսկու կողմից, պահանջվում էր գտնել այնպիսի ռացիոնալ լրիվ քառակուսի հանդիսացող թիվ, որն ավելացվելով կամ փոքրացվելով հինգով, նորից ստացվի ռացիոնալ լրիվ քառակուսի հանդիսացող թիվ։

Եթե ասենք, Լեոնարդո Պիզանոն եղել է միջնադարի մեծագույն մաթեմատիկոս, ապա դրանով գրեթե կնվագեցնենք նրա ավանդը։ Ինչպես վկայված են 1240թ. փաստաթղթերում, Պիզայի հիացած քաղաքացիներն ասում էին, որ նա բանական, բազմազանակ մարդ էր։ Իսկ բրիտանական Հանրագիտարանի գլխավոր խմբագիր Ջոզեֆ Գիզը (Joseph Gies) ոչ վաղ անցյալում հայտարարեց, որ ապագայի գիտնականները բոլոր ժամանակներում «իրենց պարտքն են տալու Լեոնարդո Պիզանոյին» որպես աշխարհի ինտելեկտուալ առաջնեկի։ Նրա աշխատանքները երկար տարիներ անց միայն հիմա են թարգմանվում լատիներենից անգլերեն։

Չնայած Ֆիբոնաչին միջնադարի մեծագույն մաթեմատիկոսն էր, նրա պատվին կանգնեցված է միայն մեկ հուշարձան, Պիզայում՝ Պիզայի աշտարակի դիմաց, Արևմտյան կողմ, նրա անունն են կրում երկու փողոցներ՝ մեկը Պիզայում, մյուսը՝ Ֆլորենցիայում։ Ֆիբոնաչին Պիզայի աշտարակի ճարտարապետ Բոնանայի (Bonanno) ժամանակակիցն էր, որի կառուցումը նա սկսել էր 1174թ.։ Նրանք երկուսն էլ մեծ ավանդ ունեն համաշխարհային պատմության մեջ, բայց նրանցից մեկը, որի ավանդը զգալիորեն գերազանցում է մյուսին, գրեթե անհայտ է։

(Հարունակելի)

**Ալեքսանդր ԽԱՉԱՏՐՅԱՆ**  
**Ֆիզմաթ գիտությունների դոկտոր,**  
**պրոֆեսոր**

## Մեթոդական

# ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՍՏԵՂՈՎԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԱՐԳԱՅՆՈՂ ՀՆԱՐՆԵՐ

Վ. Տերյանն իր «Հոգևոր Հայաստան» հոդվածում ըզգոհում էր, որ հայկական դպրոցներում հայագիտական կրթությունը չունի պատշաճ մակարդակ։ Այդ թերությունը ազգային մշակույթի տեղափոխման պատճառով էր, քանի որ «միայն համաճարները չեն, որ կռում են ազգային կուլտուրան։ Կուլտուրան ստեղծվում է համայն ժողովրդի ստեղծագործ ուժերի լարումով, ամբողջ ժողովրդի հոգու եռոզով ու հրահրումով»։ Համաժողովրդական ստեղծագործ ուժերի ոգեկոչման անհրաժեշտությունը վերաբերում է նաև մեր օրերին, ուստի և, ընդգծվում է սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացմանն ուղղված աշխատանքի հրատապությունը։

Ստեղծագործական կարողությունների զարգացման նպատակով պետք է՝

ա) հարստացնել սովորողների բառապաշարը։

բ) դաստիարակել ընթերցասիրություն, աշակերտներին ծանոթացնել ոչ միայն հայ, այլև համաշխարհային գեղարվեստական գրականության բարձրարժեք մունչներին։

գ) զարգացնել սովորողների դիտողունակությունը, շրջապատող միջավայրին իր գունահնչյունային ամբողջականությամբ ընկալելու, նրա հանդեպ հուզական և դատողական վերաբերմունք արտահայտելու ունակությունը։

դ) օգնել զգացածր ապրումների ներքին տրամաբանական կապով համագործակցած արտահայտելուն (կապակցված խոսքի, ստեղծագործական փոխադրության, շարադրության միջոցով)։

Սովորողների բառապաշարի հարստացման, մայրենիի բառազաննի յուրացման համար անհրաժեշտ է ամենօրյա հետևողական աշխատանք։ Բառուսուցում կատարվում է թե՛ գրականության, թե՛ լեզվի,

անգամ՝ աշխարհագրության և պատմության, ֆիզիկայի և այլ առարկաների դասերին։ Աշակերտի բառատեսերը շատ հաճախ խոսում է սովորողների հետ տարվող աշխատանքի որակի մասին։ Նպատակահարմար է բառատեսերում առանձնացնել չորս բաժին՝ բացատրական, ուղղագրական, արմատական և բարեհունչ բառերի։ Տեսրի առաջին թերթը հատկացնում ենք մայրենիին վերաբերող առարկաներին, որոնք որոշակի ժամանակաընթացքում անգիր են սովորում աշակերտները։

Բառատեսերի բացատրական բաժնում գրվում են ոչ միայն ծրագրային և արտահայտարանական նյութերում հանդիպող գրական անծանոթ բառերի, այլև աշակերտի տարիքային առանձնահատկությունների հաշվառումով ընտրված օրական 2-4-7 անծանոթ բառերի բացատրությունները։ Բառիմաստի յուրացումը կարելի է ստուգել թե՛ բանավոր հարցումներով, թե՛ գրավոր՝ բառարան-թելադրության միջոցով։

Ուղղագրական բաժնում գրվում են վարժություններում, ուսուցողական և ստուգողական գրավոր տեքստերում, գրականության դասին ուսուցանվող ստեղծագործություններում հանդիպող բարդ, դժվար գրություն ունեցող բառերը։ Արդյունավետ կլինի, եթե ընդգծվի բառի արմատը, որպեսզի դրանով կազմվեն բառեր։ Հարցող տղան գրվում են ուղղագրության նույն կանոնի վերաբերող ուրիշ բառեր, այսպես՝

*Ելևէջ-ելևէջավոր, էջմիածին, վայրէջք, այգեետ, անձնավ, անէջ, հնէաբան, չիլի։*

Արմատական բառերին հատկացվում են սակավաթիվ էջեր, ասենք՝ երկու թերթ տեսրի վերջին մասում, բարեհունչ բառերին՝ տասնամեկ թերթ։ Արմատական բա-

ռարանը սովորեցնում է ոչ միայն բառակազմություն, այլև օգնում է ծանոթանալու այլ լեզուներից կատարված փոխառություններին, հարկ եղած դեպքում խոսք բացում լեզվաբանականների մասին։ Այս բաժնում պետք է անդրադառնալ առավել գործածական բառախմբերին։ Օրինակ՝ *անպարար-(ծեղնածու)* արաբական *արաբ (զարմանալիք)* և հայերեն *արար (անող)* բառերից բարդված։

*Մխիթար - (սփոխանք, մխիթարանք)*՝ հայերեն *մի խիթար (մի վախենա, հոգ մի անի)* ձևից։

Անհրաժեշտ է մայրենիի կարիքներում ունենալ Հր. Աճառյանի «Արմատական բառարանը», որպեսզի աշակերտները իրենք էլ որոնեն, գտնեն հետաքրքրող բառերի ծագումն ու կազմությունը։

Մեր բանավոր ստի պատմությունը հարուստ է հանճարների, բացառիկ տաղանդների անուններով, որոնց ստեղծագործությունները գեղեցիկ, բարեհունչ բառերի գանձատուն են հիշեցնում։

«Նարեկացի» ուսուցանելու ժամանակ ուսուցիչները չպետք է շտապեն հրաժեշտ տալ տիեզերահռչակյալ բանաստեղծին։ Անհրաժեշտ է ձեռքի տակ ունենալ Նարեկացու գիրքը՝ բառազանձ ուսումնասիրելու, սովորողների բառապաշարը հարստացնելու նպատակով։ Դասերի հաջորդական հատվածներից դուրս են գրվում անծանոթ, բարեհունչ բառեր, որոնք հաճելի կլինեն օտարագործել խոսքում։ Միևսուսիկ, աշակերտների ընտրած բառաշարքերից՝ *խունկեղեզմի, ցոճիակերտ, շափյուղա, պատմունձան, բեհեզյա, գեղորդեջ, ճապուկ (տաղերից), դառնահեծ, վերընծայել, սասանվել, գաղտնաստե, բոլորանկեր, կարծառոտ, խոհածուկ, ողջակիզվել, խնկաբուրում, տագնապախոռով, հրաշագործել, ամենաքալիչ (Բան Ա)։* Հարցող դասին ուսուցիչը հանձնարարում է կազմել բառակապակցու-

թյուններ, ապա գրել ստեղծագործական շարադրություն՝ գործածելով վերոնկարյալ բառերն ու բառակապակցությունները։ Այս ձևով աշակերտները ծանոթանում են նաև Խուրյանի ու Մեծարեցի, Տերյանի, Զարեցի, Սևակի ստեղծագործությունների բառազանձին։

Սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացմանը նպաստում են ստեղծագործական փոխադրություններն ու շարադրությունները։

Կարելի է կարդալ փոխադրության վերնագիրը և առաջին մասը վերջաբանը թողնելով աշակերտի երևակայությանն ու խոսքի հնարավորություններին։ Երբեմն անհրաժեշտ է կարդալ ամբողջ տեքստը՝ առաջարկելով ընտրել համապատասխան վերնագիր։ Այս աշխատանքն օգնում է աշակերտներին շարադրություններ գրելիս ստեղծել ներդաշնակություն վերնագրի և շարադրանքի միջև։ Ստեղծագործական շարադրությունը հայոց լեզվից տրվող գրավորներից դժվարագույնն է։ Անհրաժեշտ է զարգացնել երեխաների դիտողականությունը, որպեսզի նրանք կարողանան շրջապատող աշխարհն ընկալել յուր գունահնչյունային բազմազանությամբ, ապա մշակել այդ աշխարհի հանդեպ իմաստավորված վերաբերմունք արտահայտելու և այն գրավոր խոսքով դրսևորելու կարողություններ։ Կարելի է կազմակերպել նաև խաղեր։ Ասենք, հրավիրել 5-րդ դասարանցիներին ուշադրության քննության։ մեկ-երկու րոպե լուռ լսել, ապա թվարկել լսելիքին հասած ծայերը։ Փորձել ընկալելի դարձնել գույները, առարկաները, մարդկանց բնավորությունները, ապա՝ գրել հեքիաթ, երկխոսություն։ Այս աշխատանքի ընթացքում անհրաժեշտ է երեխայի ուշադրությունը հրավիրել «բառն աշխարհ է» թունամյանական բնութագրման վրա, օգնել գտնելու բառի ճիշտ մտքի

տեղը հյուսվածքում։ Կարելի է առաջարկել կազմել համահունչ, նույնահանգ բառախմբեր, ապա դրանք գործածել երկտողում, քառատողում։ Ասենք տրված են *ծաղիկ, լույս, շունչ, շառաչ* բառերը։ Կազմվում են այսպիսի բառաշարքեր՝ *ծաղիկ-շաղիկ-տաղիկ, լույս-հույս-մարդախոյս-բարեխոյս, շունչ-մոռուչ-բարեբառուչ, շառաչ-հառաչ(անք)-առաջ* և այլն։ Կարելի է նախապես ընտրել քառատողեր և պահանջել գտնել հանգավորված բառախմբերը։ Օրինակ՝

*Մեր լեզուն ճկուն է ու բարբառու, Առնական է, կոպիտ, բայց միևնույն պահին Պայծառ է նա, որպես մշտաբորբոք փարոս, Կառված հրով անշեջ դարբերում հիմ։*

Բարձր դասարաններում առաջարկվում է ընտրել ներկայացված ասացվածքներից որևէ մեկը և այն դարձնել համապատասխան առակի, պատմվածքի, նովելի վերջաբան կամ խորագիր։

*Այսօրվա գործը վաղվան չեն թողնի։*

*Ավագի վրա տուն չեն չինի։*

*Գիտուն մարդու հետ քար կրիր, հինարի հետ իլավ մի կեր։*

*Մի ամաչիկ հարցնելուց, չգիտեցայն է ամոթ։*

*Բարեկամը փորձանքի պահին է ճանաչվում։*


Սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացմանն ուղղված աշխատանքի ձևերը բազմաթիվ ու բազմազան են և ուսուցիչը պահանջում են տրեմաշան, որոնումներով լի աշխատանք։

**Գայանե ՍՈՐՈՍՈՅԱՆ**  
**ՀՀ ԿԸՆ ԿԱԻ ԼԴՀ**  
**մասնաճյուղի գրականության**  
**մասնագետ**

ՎԱՍՏԱԿ

ՓՅՈՒՂԱՆՆԱՐԻՉԻ ՍԻՐՈՎ ԱՅՐՎՈՂ ՃՆՄԱՐԻՑ ՈՒ ՆՐԲԱԶՎԱՅ ԳՐՈՂ

(Ա. Ղահրիյան-75)



Անկեղծ ու անկաշառ ընթերցողի համար գրողին մոտիկից ճանաչելը յուրահատուկ բանալի է նրա ստեղծագործությունները վերլուծելու, քննարկելու ու գնահատելու գործում: Արտաշես Ղահրիյանը իմ համագյուղացին է, իմ համախոհը, իմ գաղափարակից բարեկամը: Ու ես այսօր շատ ուրախ եմ, որ խոսք պիտի աւենի 75-ամյա մի մարդու մասին, ով գրական աշխարհում ու ամենակամ կյանքում շիտակ է անցել Աստուծո պարգևած տարիները: Նա իր ստեղծագործություններում արտահայտած լավագույն գաղափարների ու մարդկային բարձր արժանիքների կրողն է կյանքում: Իսկ այս հանգամանքը գրողին գնահատելու կարևոր չափանիշներից մեկն է, եթե չասենք՝ ամենակարևորը: Ա. Ղահրիյանը չորս-հինգ գրքի հեղինակ է: Վերջինը՝ «Թախտու մեղեդին», իր մեջ բանաստեղծություններ է ամփոփում: Գրողի հիմնական թեման գյուղն է, գյուղաշխարհը, նրա մարդկանց կյանքն ու բարքը, նրանց ստեղծարար իմաստուն ոգին: Թեման, իհարկե, նորությունն է հայ գրականության մեջ, բայց Ղահրիյան-արձակագրի գրչի տակ այն մի առանձին հնչեղություն է ստացել: Նրա բոլոր պատմվածքներն աչքի են ընկնում

զգացմունքների անմիջականությամբ: Դրանք, թող տարօրինակ չթվա, հնարավոր չէ վերլուծել, մեկնաբանել: Դրանք միայն կարող են զգալ, ապրել... Դիտելով նրա «Ձրտուք», «Տոնականք», «Պատրանք», «Գյուղամեջ», «Հոգեհաց» և այլ պատմվածքներ: Նա կյանքի երևույթները, մարդկային հոգեվիճակները ներկայացնում է իր ձևով: Ղահրիյանը սյուժեներ ստեղծելու նպատակ չի դնում իր առաջ: Նա մեծամասամբ հերոսների երկխոսության միջոցով է ներկայացնում կյանքի այս կամ այն երևույթը: Գրողը մեծ նշանակություն է տալիս հերոսների կերպավորմանը ու նրանց բնավորության հոգեբանական վերլուծությանը: Պատմվածքներն ուշադիր կարդացողը կնկատի, որ գրողը քիչ է միջամտում հերոսների գործունեությանը, հեղինակային խոսք շատ պատմվածքներում գրեթե չկա: Սի փոքր անդրադառնանք վերջերս լույս տեսած «Քո տառը» պատմվածքին: Առանց ներքին հուզմունքի հնարավոր չէ կարդալ այն: Պատմվածքի առանցքը հայրական տան գովքն է, այլ այդ տունն ամուր ու շեն պահելու պատգամը, ճակատագրով իրեն տրված գիրը կորցրած մարդկանց շատ ազդու ձևով հասկացնելու գաղափարը: Իրոք, ինչպես ներկայացնես պատմվածքի ծերունու հոգեկան խռովքը, որին այնքան քիչ է խոսեցնում հեղինակը, բայց որի էության մեջ մեք շատ բան ենք տեսնում ու զգում... Նա կրթին պատ չէ, ոչ էլ Օհան ամի կամ Մարտին ասելով: Նա հայ ծերունու դարաբաղյան տեսակն է, ուրույն, անկրկնելի... Կամ ինչպես ներկայացնես հայրական տնից հեռացած, հեռուներում ճիտության մեջ ապրող որդու՝ այդ պահի ապրումները, մտատանջությունները, դրամա-

տիկ վիճակը: Իսկ հանդերձապահ Մեսրոպը, ուսուցիչ Արամյի՞սը... Կրակված սրտով գրված այս պատմվածքն ընթերցողին էլ է կրակի մեջ զգում: Արցախահայ արձակուրդ վաղուց արդեն իր փայլով առանձնացող գրողը փայլեց նաև պոեզիայում: Պոեզիա, որը, տերյանական մաքրություն ունենալով հանդերձ, խիստ ղահրիյանական է: Նրա բանաստեղծությունները հուզիչ են, գերող, անմիջական, հողոտ ու հողաբույր. Գայրեհի հողը մեզ բան է ասում, Մեծ լռությունը արտերի հասում, Խոր մտորմունքը շրշուն անտառի, Ինքնագրույցը մենավոր ծառի: Մեզ բան է ասում հողը հայրենի, Ժայռի մթնոլորտը հողը վայրենի, Մուռը քարանձավի շունչը անշունկ, Պաղ մայրամուտի ցուլանքը անշուք: Գայրեհի հողը ասում է՝ իմ տեր, Ի՞նչ ես մոլորվել, չես նայում միշտ վեր, Դու, իմ մշակը և իմ Աստվածը, Գերկիր հավիտյան Կարգ-հաստատվածը... Մեր գրողներից շատերն են իրենց ստեղծագործություններում կերտել ուսուցչի կերպարը, բայց խոստովանենք, նրանցից շատերի մոտ այն վեր է ածվել հռետորական, պրոպագանդիստական խոսքի: Տեսնենք ինչ հնչեղություն է ստացել այն Ղահրիյանի գրչի տակ. Նեկտարդ ազնիվ կուռ-կուռ ըմպում են, Ի՞նչ է քեզ մնում, Կրակդ խաղաղ կայծ-կայծ տանում են, Ո՞նց ես ջերմանում,

Սրտիդ ղողանքը զարկ-զարկ առնում են, Ի՞նչ ես անջրջում, Գոգուդ շողանքը շող-շող կիսում են, Ո՞նց ես ճառագում... Արտաշես Ղահրիյանը, իրոք, ինքնատիպ գրող է: Քրքրի որջ հայ գրականությունը՝ նմանը չես գտնի: Որոշ ընթերցողներ Արտաշեսին նմանեցնում են Զ. Մաթևոսյանին, բայց իրականում նրանք միայն ակունքներով են մոտ: Նրանց ձեռագիրը երբեք չես շփոթի: Ղահրիյանի ստեղծագործություններն իրենց մեջ հին օրերի պայծառ վերնուշ, կարոտի կանչ են պարունակում: Ոճը փոքր-ինչ բարդ է, լեզուն՝ թանձրավուն, բայց իմաստով հագեցած: Գրողն իր ստեղծագործություններում առատորեն, բայց միշտ տեղին է օգտագործում ժողովրդական բառ ու բանը, որով նրա խոսքն ավելի գրավիչ, ավելի պատկերավոր է դառնում: Իմ կարծիքով, Ղահրիյան-գրողը դեռ իրեն լրիվությամբ չի բացահայտել: Նրա ընթերցողները դեռ սպասելիքներ ունեն: Լավագույններից լավագույնը դեռ աշխարհ չի եկել, դեռ չի ծնվել, բայց անպայման կծնվի: - Սիրելի Արտաշես, իմ լավ, իմ ազնիվ ընկեր, դու հասել ես գրողի համար ամենահասուն և իմաստուն տարիքին, ուրեմն շարունակիր ազնիվ ու արդար հերկը քո այնքան սիրելի Սարեն արտի քարքարոտ լանջերին: Մինչև իրիկնահաց դեռ ժամանակ շատ կա: Դամոզված եմ հաստատ, հուճոճ եթե շոյալ էլ չլինի, արարած հացիդ համն ու հոտը տեղն է լինելու:

Ղահրի ԲԱՂԱՍՅԱՆ Թոշակառու ուսուցիչ

Կապեր

ԲԱՐԵՎԱՄԱԿԱՆ ԱՅՑ

Հայը՝ որպես մարդկային տիպար, միշտ էլ զգացնել է տվել իրեն իր բարեգործական գործունեությամբ, որտեղ էլ որ նա գտնվել է: Գուցե հենց սա է օգնում մեզ մեր մեջ հայը, հայկականը պահելու համար: Արդեն երկրորդ տարին է՝ գործում է Ձորավանի միջնակարգ դպրոցը: Բազմաթիվ հյուրընկալվողների թվում ունենք և մայր հայրենիքից ժամանածներ, ովքեր իրենց հոգատարությամբ մեզ հույս և հավատ են ներշնչում ապագայի նկատմամբ: Հերթական այդ ԳՅ-ից նախատեսվում էր երկու հայկական հանրապետությունների՝ ՀՀ և ԼՂՀ անկախության 21-րդ տարեդարձների կապակցությամբ: Այցելուները «Ամսար կրակներ» (Նախագահ՝ Ասյա Բարխուդարյան) ռազմահայրենասիրական, «Ազատագրում» (Նախագահ՝ Մարկոս Մելքոնյան) հայրենասիրական, «Երիտասարդության կամք» (Նախագահ՝ Աննա Գրիգորյան) երիտասարդական, ինչպես նաև «Միացյալ հայկական կազակական ուժերի միասնություն» (զլխավոր ատաման՝ զեներալ-լեյտենանտ Նվեր Թորոսյան) կազմակերպությունների անդամներն էին: Նախապես մշակված ծրագրի համաձայն՝ դպրոցում հայտարարվել էր շարադրության մրցույթ «ես իմ երկրի տերն ու ժառանգորդն եմ» թեմայով: Այն պատասխանատվություն ու հպարտություն ներշնչեց բոլորին: Մի քանի օրվա ընթացքում հավաքվեցին բազմաթիվ բովանդակալից շարադրություններ: Դրանք ներկայացնելու համար ընտրվեց 13-ը, որոնցից վերոհիշյալ կազմակերպությունները պետք է ընտրեին երեք լավագույնը: Ծարադրություններն ընթերցելիս, իրոք, զգում ես, որ քո կողքին մեծանում է մի սերունդ, ով ծանոթ լինելով իր ժողովրդի պատմական անցյալին, հպարտորեն կրում է այն ու ձգտում ստեղծել նորը՝ իր ժառանգներին կտակելու համար: Դպրոցի հանդիսությունների սրահն առավոտ վաղ կահավորված էր. ՀՀ և ԼՂՀ պետական խորհրդանիշներ, ազգային հերոսների դիմանկարներ, գրքեր՝ նվիրված գոյամարտին, իսկ ՄԿ կազմակերպիչ Սիլվա Բալայանը հերթական անգամ էր կատարում հանդես-միջոցառման փորձերը: Միջոցառումը ընթացավ պատշաճ ձևով, երգն ու արտասանությունը, հայկական «Քոչարին» նոր շուք տվեցին: Դպրոցի փոխտնօրեն Գ. Մաթևոսյանի հայրենասիրական կոչը ամբողջացրեց օրվա խորհուրդը: Ընտրված երեք լավագույն շարադրությունների հեղինակներ Նուրե Ղուլյանը, Արթուր և Նաիրա Սուլեյմանյանները հյուրերի կողմից պարգևատրվեցին գովասանագրերով ու գրքերով: Պարգևատրվեցին նաև ուսուցիչներ Ս. Արզումանյանը, Լ. Սողոմոնյանը և Ի. Օհանյանը: Դրանք դատարկածեռն չէին եկել. սկավառակներ Արևմտյան Հայաստանի մասին, գեղարվեստական գրքեր, պատմական քարտեզներ, հանրագիտարան (Արցախյան պատերազմի) և գրեմական պիտույքներ՝ առաջին դասարանցիների համար: Հավաքույթի ժամանակ տիկին Աննան նշեց, ավելի շուտ կատարեց մի փոքր ճշտում՝ իրենք ոչ թե եկել են Հայաստանից, այլ Հայաստանում են,

ուղղակի եկել են Երևանից: Այս ճշմարտությունը մեծ խորհուրդ ունի: Մերօրյա սերունդը պետք է գիտակցի, որ Արցախը եղել է, կա ու կմնա հայերի բնօրրան ու ամբողջական կոչառնա Մայր Հայաստանի կազմում: Այս գիտակցությամբ պետք է դաստիարակվի ամեն մի հայ մանուկ: Վերջում դպրոցի տնօրեն Ս. Արզումանյանը երախտագիտության խոսք ասաց հյուրերին: Հանդիպումը դպրոցում ավարտվեց, բայց՝ ոչ դպրոցականների հետ: Դրանք բարեգործական համերգով հանդես եկան հարևան 2-րդ պաշտպանական շրջանի զինծառայողների առաջ: Հրավիրվեցին և մեր դպրոցի ավագ դասարանների աշակերտները, որոնք դասղեկների ուղեկցությամբ մասնակցեցին համերգին ու վերադարձան մեծ բավականություն ստացած: Այդ օրն իսկական ռազմահայրենասիրական դաս էր: Երբ զգում ես, որ կողքիդ ունես այնպիսի մարդիկ, ովքեր չեն խնայում ոչինչ՝ օգնելու, սատարելու և ոգևորելու համար, ինքդ էլ լցվում ես արարման ցանկությամբ: Ընդամենը մի քանի ժամվա հանդիպում, բայց որքան մեծ ոգևորություն ստացանք և մեծ հավատով լցվեցինք վաղվա օրվա նկատմամբ: Մեր բարեկամական հանդիպումն անցավ ջերմ մթնոլորտում, որտեղ թագավորում էին փոխադարձ սերն ու հարգանքը: Դա առաջին, բայց ոչ վերջին հանդիպումն էր, այն կկրի շարունակական բնույթ:

Պայանե ՍԱԹՎՈՍՅԱՆ Զորավանի միջև. դպրոցի ՄԿԱԳՏՏ

Անոթ

ՀԵՐՈՍԻ ԿՈՉՈՒՄ՝ ՆՈՐ ՄԱՐԴԱՍՊԱՆԻՆ


Մարդասպաններին գնահատել այնպես, ինչպես Իլիամը աղբեջանցի... Ի տես ամենքի, ի լուր աշխարհի, Ի տես հենց իրենց պարտված, բայց «հպարտ» Այն ժողովրդի, որ նորից իրենց Թույլ երակի մեջ հոժար, ծուլ կամքով Արյան ներարկման նման անարգել Ընդունում են նոր դեղեր թունավոր... Մեղա, տե՛ր Աստված, մարդաբար մի օր, Որ փրկես մարդուն մեղքից գորավոր... Ո՛վ հայ ժողովուրդ, ախր մինչև ե՛րբ Հենվես միամիտ քո իմ հավատին, Քո հոգու բնում տեղ տաս կավատին, Արթնացիր միտքից, Տերն ասաց՝ կացե՛ք, եղե՛ք մշտաբուն, Որ գալուս պահին լսե՛ք ձայնը իմ, Արթուն մնացե՛ք, թե չէ՛ ինչ-որ մի Գիվաղ մարդասպան ու ծարավ արյան Իր յաթաղանից էլ կոչտ մի գործիքով՝ Տասնվեց զարկով կացնով արյունոտ Մի հայ կապանի՝ անունը Գուրգեն, Քնած ժամանակ... Քնած ժամանակ մի ողջ Հայաստան, Մի Արցախ ու մի էրգիր հայկական Իրենց երակից հոսող տաք արյան Սարսուռից հանկարծ կմռնչային Ցավից անողոր... Ութ տարի հետո դեռ չմռացած Թիկունքին իջած ցավը հարվածի, Հունգար պարունը թուրք մարդասպանին Կհանձներ երկրին Ալի Չեյդարի - Հերոսացումի, փառքի ու կուռքի երկրպագության Դժբախտ մի երկրի... Այն երկրին, որտեղ ամեն մի մանկան երակում ոչ թե տաք արյուն, Այլ նավթ է եռում պատրաստ բռնկման... Տե՛ր իմ, ներիդ ինձ, Համարձակվում են կրկնել մեծ երգի Մեծ բանաստեղծին՝ Սիամանթոյին՝ «Թող որ ես թքեմ դար հարյուրամյա, Քո պինդ ու իղկված ու ստոր ճակատին...»:

Ջոյա ՀՈՎԿԱՆԻՍՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ԱՅՍ ԱՆՔԱՍ ԷԼ ՎԵՐԱԴԱՐՁԱՆ ԳԱՎԱԹՆԵՐՈՎ

Սեպտեմբերի 27-30-ը Ծաղկաձորում կայացավ 33 Ազգային ժողովի գավաթի եզրափակիչ փուլի խաղարկությունը: 12 մարզերի թվում մասնակցում էր նաև Արցախի հավաքականը, որը ներկայացնում էին ԼՂՀ Ազգային ժողովի գավաթի առաջին մրցանակակիր՝ Գեորգի Զոհանի Մեծ Թաղերի միջնակարգ դպրոցի (մարզիչ՝ Ռոբերտ Ավետիսյան) և 6-րդ դասարանների մեջ առաջին տեղ գրաված՝ Շուշիի Խ. Աբովյանի անվան հիմնական (մարզիչ՝ Գեորգի Դանիելյան) և Մուրադանի անվան ավագ (մարզիչ՝ Վալերի Մանասյան) դպրոցների աշակերտներից կազմված թիմը՝ բաղկացած 6-ական տղաներից և աղջիկներից:



տպավորիչ հաղթանակ ևս. 6-րդ դասարանների մեջ Շուշիի դպրոցականները գրավեցին առաջին տեղը:

Պետք է ասել, որ վերջին չորս տարիներին Արցախի դպրոցականները պատվով են դուրս գալիս Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի գավաթի համար մրցումներից: Այսպես, առաջին տարին մասնակցելով՝ 2009թ. Արցախի թիմը գրավեց երկրորդ տեղը, 2010-ին՝ առաջին տեղը, 2011-ին՝ չորրորդ և այս տարի՝ երկրորդ տեղը: Ի դեպ, Արցախի թիմի կազմում հիմնականում եղել են Շուշիի երեխաները: Դրանում, անշուշտ, մեծ է վերը նշված ուսուցիչ-մարզիչների դերը: Նրանց նվիրված, քրտնաջան աշխատանքի արդյունքները բերկրանքի բազում պահեր են պարգևել: ԼՂՀ կրթության և գիտության նախարարության ֆիզկուլտուրայի գծով գլխավոր մասնագետ Արթուր Աթանեսյանն ուրախությամբ ներկայացնելով շրջանի դպրոցների մարզական հաջողությունները՝ ընդգծում է նվիրված աշխատանքի կարևորությունը՝ ասելով, որ մայրաքաղաքում դպրոցների կան, որտեղ առկա են լավ պայմանները, սովորողների բավարար բանակը, սակայն շրջանների դպրոցների ցուցանիշների կեսն էլ չունեն: Ուրեմն, անհրաժեշտ է աշխատել մեծ ցանկությամբ, նվիրումով ու պատասխանատվության զգացումով, և արդյունքներն իրենց սպասել չեն տա:

Սեփ. Լրարվություն

ՄԻՆԻ ՖՈՒՏԲՈՒԼ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄՐՉՈՒՄՆԵՐՈՒՄ

Սեպտեմբերի 24-28-ը Ստեփանակերտի մարզախաղերի հրապարակում ԼՂՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների 5-9-րդ դասարանների տղաների միջև տեղի ունեցան մինի ֆուտբոլի հանրապետական մրցումներ: Մասնակցում էին Ստեփանակերտ քաղաքի և ԼՂՀ բոլոր շրջանների հավաքական թիմերը:

Թիմերը, վիճակահանությամբ ենթախմբերի բաժանվելուց հետո, սկսեցին մրցումները, որոնք անցան համառ, անզիջում պայքարում: Նկատելի էր մեծ տարբերություն մախորդ տարիների համեմատությամբ, հատկապես շրջանների թիմերի մոտ, որն արդյունք է տեղեղում մասնագետների նպատակասլաց աշխատանքի:

Մրցումների վերջին օրն ի հայտ բերվեցին մրցանակային տեղեր գրաված թիմերը: Երրորդ տեղը գրավեց Մարտունու շրջանի թիմը՝ վերջին վճռորոշ խաղում հաղթելով Ասկերանի շրջանին:

Վերջին խաղում Ստեփանակերտ քաղաքի և Մարտակերտի շրջանի թիմերը վիճարկեցին 1-ին և 2-րդ տեղերը:

Ի վերջո, հաղթելով վճռական խաղում, մրցումների հաղթող ճանաչվեց Ստեփանակերտ քաղաքի թիմը:

Մրցանակային երեք տեղեր գրաված թիմերը ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կողմից արժանացան դիպլոմների, գավաթների, իսկ թիմերի բոլոր անդամները՝ համապատասխան կարգի մեդալների:

Պատվոգրերով ու թանկարժեք նվերներով պարգևատրվեցին նաև մրցումներում լավագույն խաղացողներ ճանաչված Գեղամ Տոնյանը (Մարտակերտի հ. 1 ավագ դպրոց) և Տիգրան Գասպարյանը (Ստեփանակերտի հ. 8 ավագ դպրոց):

Պարգևատրումները կատարեց և հաղթողներին շնորհավորեց ԼՂՀ ԿԳՆ կրթության և գիտության վարչության պետ Ռ. Մուսայեյանը:

Մուրադ ՇԱՀՐԱՍՄԱՆՅԱՆ

«ՏԵՍՈՒՉԻ ՕՐԱԳՐԻՑ» ՇԱՐՔԻՑ

ԼՂՀ ԿԳՆ կրթության պետական տեսուչ Սուսաննա ՀովսեփՅանը, լինելով դպրոցներում, գրի է առել ծիծաղաշարժ գրույցներ, որոնցից մի քանիսը ներկայացնում ենք ստորև:

Երեխան ուշացած մտնում է դասարան ու գոչում. - Էղ ին՞՞ առանց ին՞՞ տառը սկսալք:

- «Կապույտ»-ի հոմանիշը ո՞վ կասի,- հարցնում է ուսուցչուհին: - Գետ, տեսնո՞ւս նկարը կապույտ,- պատասխանեց երեխան:

Չորս տարեկան երեխան հարցնում է. - Տատիկ, քանի՞ տարեկան է Ամժելիկան: - Երեք,- պատասխանեց տատիկը: - Պա էմի՞ն տարե՞ն: - Չորս,- համբերությամբ պատասխանում է տատիկը: - Տատիկ, վախումնո՞ւս Ամժելիկան ին՞՞մանա առաջ ըն՞գի:

Գրատախտակի մոտ կանգնած երեխան մոռացել է «Է» տառը: - Գրում ես էջի է՞ն,- հուշում է ուսուցչուհին:

- Ո՞վ կարող է թվարկել «Սատունցի Դավիթ» էպոսի հերոսներին,- հարցնում է տեսուչը ու փորձում հուշել. - Սանասար, Բաղդասար... - Հա՛, մնել Գանձասար,- պատասխանում է երեխան գոհ ու երջանիկ:

Ուսուցչուհին դիմում է աշակերտին. - Հիմարի մեկը, թո պատճառով մազերս սպիտակել են: - Ես կրասկայը ըն՞լան, քսիմ մազերու,- պատասխանում է փոքրիկը:

Նոր ուսումնականի առաջին օրը ուսուցչուհին դիմում է երեխաներին. - Բարի գալուստ... - Ղարաբաղ Տելեկոմ,- շտապ պատասխանում է առաջին դասարանցին:

Ուսուցչուհին հարցնում է. - Որտե՞ղ է ծնվել Մեսրոպ Մաշտոցը: - Տարեկաց Հացեկացում,- պատասխանեց աշակերտը:

Ուսուցչուհին. - «Տես» բառին ավելացրու նախածանց: Երեխան դժվարացավ, ուսուցչուհին հուշեց. - Չ,- - Տեսուչ,- պատասխանեց երեխան:

Ուսուցիչը հարցնում է երեխաներին. - Ո՞վ է աշխարհի շախմատի հայ չեմպիոնը: - Ես,- պատասխանեց երեխաներից մեկը:

Հարցնում են ուսուցչուհուն. - Քանի՞ ժամ ծանրաբեռնվածություն ունես: - Ծանրաբեռնված չեմ,- պատասխանեց ուսուցչուհին:

Ուսուցչուհին հարցնում է. - Որտե՞ղ է ծնվել Մեսրոպ Մաշտոցը: Երեխաները չգիտեն: Հարցն առաջադրվեց երկրորդ անգամ: Փոքրիկ Արամը համարձակ պատասխանեց. - Ես չեմունը ծնվալա, էմին չեմունն էլ թաղալն պո՞ժալ:

Գրավորի ժամանակ «գեղեցիկ» բառը երեխան գրում է «եղեցիկ»: Ուսուցիչը հարցնում է. - Ա՛յ տղա, ինչո՞ւ ես գրել եղեցիկ: - Պա հի՞նչ անիմ, «Գ» տառը մնաս ըն՞գալա:

Մ Կ Ս Վ Ա Ճ Է  
ԼՈՒՍԱՐԱՐ - ի  
2013 թվականի բաժանորդագրությունը  
«ԼՈՒՍԱՐԱՐ»-ը հաղորդակցման հուսալի ամբիոն է:  
«ԼՈՒՍԱՐԱՐ»-ը՝ անաչառ գրուցակից ու խորհրդակից:  
«ԼՈՒՍԱՐԱՐ»-ը Արցախի հո՛ւնոր ներուժի խրատումն է:  
Տարեկան բաժանորդա՛իւնը անփոփոխ է՝ 2600 դրամ:

ԼՈՒՍԱՐԱՐ  
Խմբագիր՝ ՍԵՏԼԱՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ  
Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ  
Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 111, ☎ 94-38-99, E-mail: gorctert@mail.ru  
Մեջբերումների եւ փաստական տվյալների ստույգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:  
Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզալ պլյուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3205: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 10.10.2012թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ:

Գրանցված է  
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
արդարադատության նախարարության կողմից  
2012 թվականի օգոստոսի «23»-ի  
Պետական գրանցման համարը 10512126  
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
արդարադատության նախարար  
Ն. Նարինյան

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
Կրթություն և Գիտություն նախարար  
«16» օգոստոսի 2012 թվականի N 145/Ն  
ք. Ստեփանակերտ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
Պաշտպանության նախարար  
«18» օգոստոսի 2012 թվականի N 246 -Ն  
ք. Ստեփանակերտ

## Հ Ա Մ Ա Տ Ե Ղ Հ Ր Ա Մ Ա Ն

### Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հիմնական, Ավագ, Միջնակարգ Հանրակրթական Գործչներին, Վարժարաններին, Կրթաշատախոսներին, Նախնական Մասնագիտական (Արձեմսագործական) Եվ Միջին Մասնագիտական Ուսումնական Հաստատություններին Սովորողներին Նախաձրտական Պատրաստության Կանոնադրույթի Կազմակերպչական Մասին

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 26-ի N 512-Ն որոշման 2-րդ կետին համապատասխան՝

### Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Ն Ք

- Հաստատել՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հիմնական, ավագ, միջնակարգ հանրակրթական դպրոցներում, վարժարաններում, կրթահամալիրներում, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների նախաձրտական պատրաստության կանոնադրույթը՝ համաձայն հավելվածի:
- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ընդհանուր բաժնին՝ սույն հրամանը սահմանված կարգով ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման:
- Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի տեղակալ Ս. Ասրյանին և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալ Ս. Կարապետյանին:
- Սույն հրամանի մասին տեղեկացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զինված ուժերի զորամասերի պետերին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչակազմերի ղեկավարներին և Ստեփանակերտի քաղաքապետին:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
Կրթություն և Գիտություն նախարար  
Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
Պաշտպանության նախարար  
Մ. ՀԱՎՈՐՅԱՆ

Հավելված  
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և  
գիտության նախարարի  
2012 թվականի  
օգոստոսի 16-ի N 145/Ն  
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարի 2012 թվականի  
օգոստոսի 18-ի N 246 -Ն  
համատեղ հրամանի

## Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

### Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հիմնական, Ավագ, Միջնակարգ Հանրակրթական Գործչներին, Վարժարաններին, Կրթաշատախոսներին, Նախնական Մասնագիտական (Արձեմսագործական) Եվ Միջին Մասնագիտական Ուսումնական Հաստատություններին Սովորողներին Նախաձրտական Պատրաստության Կանոնադրույթի Կազմակերպչական Մասին

#### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԵՆԵՐ

- Սույն կանոնադրույթում  
վշակվել է Լեռնային Ղարաբաղի  
Հանրապետության կառավարու-  
թյան 2011 թվականի հուլիսի 26-ի  
«Լեռնային Ղարաբաղի Հանրապե-  
տության հիմնական, ավագ, միջնա-  
կարգ հանրակրթական դպրոցնե-  
րում, վարժարաններում, կրթահա-  
մալիրներում, նախնական մասնա-  
գիտական (արհեստագործական) և  
միջին մասնագիտական ուսումնա-  
կան հաստատություններում նա-  
խաձրտական պատրաստության  
կարգը հաստատելու և Լեռնային  
Ղարաբաղի Հանրապետության կա-  
ռավարության 2004 թվականի ապ-  
րիլի 27-ի N 161 որոշման ուժը կորց-  
րած ճանաչելու մասին» N 512-Ն  
որոշման 2-րդ կետի համաձայն և  
նախատեսված է Լեռնային Ղարա-  
բաղի Հանրապետության հիմնա-  
կան, ավագ, միջնակարգ հանրակր-  
թական դպրոցներում, վարժարան-  
ներում, կրթահամալիրներում, նախ-  
նական մասնագիտական (արհես-  
տագործական) և միջին մասնագի-  
տական ուսումնական հաստատու-  
թյուններում (այսուհետ՝ ուսումնա-  
կան հաստատություն) սովորողների  
նախաձրտական պատրաստու-  
թյունը կազմակերպելու և անցկա-  
ցնելու համար:
- Ուսումնական հաստատու-

թյունների (անկախ կազմակերպա-  
կան-իրավական ձևից և ենթակառու-  
ցվածքից) սովորողների նախաձրտա-  
կան պատրաստությունը իրա-  
կանացվում է «Ձիմնապատրաստու-  
ման մասին» Լեռնային Ղարաբաղի Հան-  
րապետության օրենքի 8-րդ հոդվա-  
ծի, Լեռնային Ղարաբաղի Հանրա-  
պետության այլ իրավական ակտե-  
րի, ինչպես նաև սույն կանոնադրու-  
թյան համաձայն պատահաններին  
Լեռնային Ղարաբաղի Հանրապե-  
տության զինված ուժերում ծառա-  
յության նախապատրաստելու նպա-  
տակով:

3. Ուսումնական հաստատու-  
թյուններում նախաձրտական պատրաս-  
տությունը իրականացվում է «Նախնական  
զինվորական պատրաստություն» առարկայի ու-  
սուցման և ռազմահայրենասիրա-  
կան դաստիարակության աշխա-  
տանքների կազմակերպման միջո-  
ցով:

4. Ուսումնական հաստատու-  
թյունում «Նախնական զինվորա-  
կան պատրաստության» հիմնա-  
կան խնդիրներն են՝

- 1) ապահովել սովորողների կող-  
մից «Նախնական զինվորական  
պատրաստություն» առարկայի պե-  
տական ուսումնական ծրագրի յու-  
րացումը,
- 2) սովորողներին պարզաբանել  
Լեռնային Ղարաբաղի Հանրապե-  
տության զինված ուժերի խնդիրնե-

րը, առանձնահատկություններն ու  
նշանակությունը,

3) սովորողների մեջ դաստիա-  
րակել ազգային բանակում ծառայե-  
լու անհրաժեշտության զգացումը,

4) կազմակերպել զինվորական  
երդման, համագործակցության կանոնադ-  
րությունների պահանջների ուսու-  
ման համար և դաստիարակել դրանք  
անվերապահորեն կատարելու  
պատրաստակամություն,

5) պատահաններին ծանոթացնել  
զորամասերի ռազմական անձնա-  
կազմի կյանքին ու կենցաղին, զեն-  
քին ու զինվորական տեխնիկային,

6) տեսական և գործնական  
պատրաստության միջոցով իրակա-  
նացնել սովորողների շարային և  
հրաձգային պատրաստությունը,

7) սովորողներին զինել անհրա-  
ժեշտ ռազմական զինամթերքով,  
ապահովել մարտավարության ու  
քաղաքացիական պաշտպանու-  
թյան և արտակարգ իրավիճակների  
հիմնահարցերի հիմունքների յուրա-  
ցումը,

8) սովորողների մոտ ձևավորել  
ռազմակիրառական կարողություն-  
ներ, հմտություններ, կամային  
բարձր հատկանիշներ, առաջին բու-  
ժօգնություն, ինքնօգնություն, փո-  
խօզնություն ցուցաբերելու ունա-  
կություն,

9) սովորողների մոտ ձևավորել  
քաղաքացիական պաշտպանու-  
թյան ազդանշաններով գործելու,

պաշտպանական կառույցներից և  
անհատական պաշտպանական մի-  
ջոցներից օգտվելու ունակություն,  
արտակարգ իրավիճակներում գոր-  
ծելու հմտություն և անհրաժեշտ  
վարվելակերպ,

10) դաստիարակել հայոց բա-  
նակի պատմական ավանդույթնե-  
րին ծանոթ, ֆիզիկապես և բարոյա-  
պես առողջ, դիմացկուն, բազմա-  
կողմանի զարգացած, հայրենիքի  
պաշտպանությանը պատրաստ  
պատահաններ և աղջիկներ,

11) սովորողների շրջանում իրա-  
կանացնել մասնագիտական կողմ-  
նորոշման աշխատանք՝ ըստ նա-  
խաձրտությունների ռազմական ու-  
սումնական հաստատություններ  
ընդունվելու նպատակով:

5. Ուսումնական հաստատու-  
թյունում «Նախնական զինվորա-  
կան պատրաստություն» առարկան  
դասավանդում է զինվորական ղե-  
կավարը, իսկ առաջին բուժօգնու-  
թյան հիմունքների դասավանդումը  
իրականացվում է բժիշկների, միջին  
բուժանձնակազմի, պետական հու-  
մանիտար բուհերի քաղաքացիա-  
կան պաշտպանության պահեստա-  
գորի միջին բուժանձնակազմի վկա-  
յական ունեցող շրջանավարտների  
(որոնք ունեն առաջին բուժօգնու-  
թյուն դասավանդելու իրավունք),  
ինչպես նաև առաջին բուժօգնու-  
թյան վերապատրաստման դասըն-  
թացներ անցած և համապատաս-

խան որակավորում ստացած զին-  
վորական ղեկավարների միջոցով:

6. Սովորողների հետ տարվող  
ռազմահայրենասիրական աշխա-  
տանքն ընդհանուր դաստիարակ-  
չական աշխատանքի բաղկացուցիչ  
մասն է և իրականացվում է պլանա-  
վորված կարգով՝ դասընթացի, մյուս  
մանկավարժների և զինղեկի կող-  
մից՝ տնօրենի ղեկավարությամբ:

#### II. ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԴԵՎԿԱՐՈՒՄԸ

- Սովորողների «Նախնական  
զինվորական պատրաստություն»  
առարկայի անցկացման ընդհանուր  
ղեկավարումն ու հսկողությունն ի-  
րականացնում է Լեռնային Ղարա-  
բաղի Հանրապետության կրթության  
և գիտության նախարարությունը՝  
համագործակցելով Լեռնային Ղա-  
րաբաղի Հանրապետության պաշտ-  
պանության նախարարության և  
Լեռնային Ղարաբաղի Հանրապե-  
տության կառավարությանն առըն-  
թեր փրկարար ծառայության հետ:
- Լեռնային Ղարաբաղի Հան-  
րապետության կրթության և գիտու-  
թյան և Լեռնային Ղարաբաղի Հան-  
րապետության պաշտպանության  
նախարարությունները, Լեռնային  
Ղարաբաղի Հանրապետության ա-  
ռողջապահության, Լեռնա-  
յին Ղարաբաղի Հանրա- **10**

ԽՈՍՔ

պետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունների, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության առընթեր սպորտի պետական կոմիտեի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության փրկարար ծառայության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության, այլ շահագրգիռ նախարարությունների հետ համատեղ մշակում են հրամաններ, հրահանգներ, ուսումնական ծրագրեր, մեթոդական և այլ նորմատիվ փաստաթղթեր, միջոցառումների պլաններ, որոնք առնչվում են «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի անցկացմանը, կազմակերպում և ուսումնասիրում են սովորողների հետ տարվող ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքի և «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսուցման որակը՝ համաձայն սույն կանոնադրության 7-րդ գլխի և ենթահավելվածի:

9. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը՝

1) իրականացնում է սովորողների «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի անցկացման ընդհանուր ղեկավարումը,

2) ապահովում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսուցման և ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքների անցկացման անհրաժեշտ մակարդակը,

3) համակարգում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ծրագրերի, դասագրքերի, հաշվետախտակի, հրահանգների համեմատարակման գործընթացի, մեթոդական և այլ նորմատիվ փաստաթղթերի մշակման և ներդրման աշխատանքները,

4) կազմակերպում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի վերաբերյալ ուսումնադիտողական նյութերի մշակումն ու հրատարակումը,

5) ուսումնասիրում, ընդհանրացնում և տարածում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի անցկացման աշխատանքի դրական փորձը, նյութական և բարոյական խրախուսման արժանացումն լավագույն ուսումնական հաստատությունների և աշխատողներին, կազմակերպում է «Լավագույն զինվոր» մրցույթը,

6) մասնակցում է զինվորների, առաջին բուժօգնության հիմունքներ դասավանդողների որակավորման բարձրացման աշխատանքներին, անցկացնում է նրանց ատեստավորումը,

7) մշակում է զինվորների պատրաստման, վերապատրաստման և ատեստավորման կարգը՝ համագործակցելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ,

8) ղեկավարում է վերահսկում է սովորողների ֆիզիկական պատրաստության վիճակը, մեթոդական օգնություն է ցույց տալիս ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչներին և զինվորներին ուժային կարծիքներին անցկացնում է հարցերի,

9) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունների, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր սպորտի

պետական կոմիտեի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն փրկարար ծառայության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության հետ համատեղ կազմակերպում և անցկացնում է ռազմաարգական խաղեր, մրցումներ, գիտակրթական կոմֆերանսներ և այլ միջոցառումներ,

10) իրականացնում է նաև սույն կանոնադրությունից բխող այլ լիազորություններ:

10. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարությունը՝

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունների, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր սպորտի պետական կոմիտեի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր փրկարար ծառայության հետ համատեղ աջակցում է սովորողների ռազմադաշտային պարապմունքների (հավաքների) «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի օլիմպիադաների և ռազմամարզական խաղերի անցկացմանը,

2) պահեստազորի սպաներից ներկայացնում է զինվորների թեկնածուներ,

3) «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի անցկացման որակի մասին առաջարկություններով դիմում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը,

4) իրականացնում է զինվորների վերապատրաստման աշխատանքները ռազմական գիտելիքների մասով,

5) ուսումնական հաստատությանը կցում է զորամաս, որը մշտապես աջակցում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի կազմակերպմանը,

6) կազմակերպում է սովորողների այցելություններ զորամաս, բաց դռների օրեր, հանդիպումներ մարտական գործողությունների մասնակիցների, մարտական պատրաստության գերազանցիկների հետ,

7) սովորողներին ծանոթացնում է ռազմական տեխնիկային, զինծառայողների կյանքին ու կենցաղին,

8) գործնական պարապմունքների անցկացման համար առանձնացնում է սպաների, ենթասպաների և սերժանտների, տրամադրում է հրաձգարաններ, գեներ, փամփուշտներ և այլ անհրաժեշտ միջոցներ,

9) օգնություն է ցույց տալիս զինկոմիսարիատներին զինվորների հետ ցուցադրական պարապմունքներ անցկացնելիս,

10) օժանդակում է ուսումնական հաստատությունների «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսումնական ու նյութատեխնիկական բազայի հարստացմանը:

11. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարությունը՝

1) մասնակցում է զինվորների առաջին բուժօգնության հիմունքների ուսուցման գործընթացին,

2) ուսումնական հաստատություններում բժշկական գիտելիքների հիմունքների ուսուցման որակի մասին առաջարկություններով դի-

մում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը,

3) իրականացնում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի պլանավորումը բժշկական գիտելիքների մասով:

12. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր փրկարար ծառայությունը՝

1) մասնակցում է զինվորների վերապատրաստման աշխատանքներին՝ արտակարգ իրավիճակների հիմնահարցերի ուսուցման մասով,

2) ուսումնական հաստատություններում արտակարգ իրավիճակների հիմնահարցերի ուսուցման որակի մասին առաջարկություններով դիմում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը,

3) աջակցում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսումնադիտողական բազայի հարստացմանը,

4) իրականացնում է առարկայի պլանավորումը՝ արտակարգ իրավիճակների հիմնահարցերի մասով,

5) գործնական պարապմունքների անցկացման նպատակով ուսումնական հաստատություններին առաջարկում է քաղաքացիական պաշտպանության կառույցներ (սպասարաններ, հակաճառագայթային թաքստոցներ) և անհատական պաշտպանական միջոցներ:

13. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանությունը՝

1) մշակում և հրատարակում է մեթոդական ձեռնարկներ «Ձեռքի հետ անվտանգ վարվելու կանոններ»-ը, «Հասարակական կարգի պահպանման», «Քաղաքացիական պարտքի գիտակցման», «Ոստիկանություն-ուսումնական հաստատություն լիարժեք կապի ստեղծման» վերաբերյալ, օժանդակում է ուսումնական և նյութատեխնիկական բազայի հարստացմանը,

2) տանում է քարոզչական աշխատանքներ ոստիկանական ուսումնական հաստատություններ ընդունվելու հետ կապված թեկնածուներ ընտրելու համար,

3) պարբերաբար ուսումնական հաստատություններում անցկացնում է մեթոդական աշխատանքներ, հրահանգավորումներ, գործնական պարապմունքներ մանկավարժական կոլեկտիվի և սովորողների հետ՝ հասարակական կարգի պահպանման, քաղաքացիական պարտքի գիտակցման, արտակարգ իրավիճակներից խուսափելու համար կանապատասխան թեմաներով,

4) ուսումնական տարին մեկ անգամ ուսումնական հաստատություններում ուսումնասիրում է զենքի պահման պայմանները և հատկացված զենքի ու ռազմամթերքի առկայությունը:

14. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունը՝

1) աջակցում է ուսումնական հաստատությունների՝ զորամասերի, սահմանապահ ուղեկազմների հետ կապերի ամրապնդմանը, սովորողների և զինվորական ղեկավարների հետ ռազմադաշտային պարապմունքների (հավաքների) անցկացմանը,

2) զորամասերի հրամանատարների, կրթության ոլորտի և այլ շահագրգիռ մարմինների հետ համատեղ սովորողների համար կազմակերպում է մարտական փամփուշտներով հրաձգություն, ռազմահայրենասիրական խաղեր, մրցումներ,

այլ միջոցառումներ,

3) կրթական ոլորտի և այլ շահագրգիռ մարմինների հետ ուսումնական հաստատություններում ստեղծում է «Սահմանապահի պատանի ընկերներ» ռազմահայրենասիրական բնույթի ակումբներ և աջակցում ակումբների աշխատանքներին,

4) կազմակերպում է համատեղ խորհրդակցություններ շահագրգիռ նախարարությունների հետ պետական սահմանի պահպանման, քաղաքացիական պարտքի գիտակցման և այլ թեմաներով,

5) ուսումնական հաստատությունները կցում է ուղեկազմ կամ զորամասի, որը մշտական օգնություն է ցույց տալիս «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի և ռազմահայրենասիրական դաստիարակության կազմակերպման գործում,

6) կազմակերպում է սովորողների այցելություններ ուղեկազմ, սահմանապահ զորքերի ուսումնական կենտրոն, բաց դռների օրեր, հանդիպումներ մարտական գործողությունների մասնակիցների, մարտական պատրաստության գերազանցիկների հետ,

7) սովորողներին ծանոթացնում է ռազմական տեխնիկային, զինվորական ծառայողների կյանքին ու կենցաղին,

8) պարապմունքների համար տրամադրում է հրաձգարաններ, ինքնաձիգ հրազեն, փամփուշտներ, այլ անհրաժեշտ միջոցներ,

9) սովորողների հետ գործնական պարապմունքներ անցկացնելու նպատակով առաջարկում է թեկնածուներին սպաների, ենթասպաների, սերժանտների կազմից,

10) օժանդակում է ուսումնական հաստատությունների «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսումնական ու նյութատեխնիկական բազայի հարստացմանը:

**III. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ «ՆԱՄՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՑ ԳՈՐԾԱՌՈՒԹՅՆԵՐԸ**

15. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերի ղեկավարները և Ստեփանակերտի քաղաքապետը, իրենց ենթակայության տակ հիմնական, ավագ, միջնակարգ հանրակրթական դպրոցներ, վարժարաններ, կրթահամալիրներ, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ ունեցող նախարարությունների և գերատեսչությունների համապատասխան ստորաբաժանումների ղեկավարները, ոչ պետական մասնատիպ ուսումնական հաստատությունների հիմնադիրները՝

1) վերահսկողություն են սահմանում համաձայն ուսուցիչների և մանկավարժների ընտրության մրցութային սահմանված կարգի՝ հիմնական, ավագ, միջնակարգ ուսումնական հաստատություններում պարտադիր հիմունքներով զինվորական ղեկավարների ընտրության և նշանակման ընթացակարգի վրա,

2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերի և Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության բաժինների աշխատողների թվից նշանակում են «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի անցկացման պատասխանատու աշխատողի (մասնագետի),

3) զինկոմիսարիատների, կցված զորամասերի և ուսումնական հաստատությունների տնօրենների

հետ համատեղ մշակում են «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի միջոցառումների պլաններ, կազմակերպում այդ միջոցառումների նախապատրաստումը և անցկացումը:

16. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններում և Ստեփանակերտ քաղաքում «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի և ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքների համակարգված կազմակերպման համար, զինվորների կողմից ընտրվում է ավագ զինվոր, որի մասին տեղեկացվում է տարածքային զինվորական կոմիսարը: Ձիմվորական կոմիսարը այդ մասին ի գիտություն է հայտնում տվյալ տարածքի բոլոր ուսումնական հաստատությունների տնօրեններին: Ավագ զինվորը՝

1) պատասխանատու է ուսումնական հաստատություններում «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսուցման, ռազմահայրենասիրական դաստիարակության ու քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության աշխատանքների կազմակերպման համար,

2) իրականացնում է մշտական կապ տարածքային զինկոմիսարիատի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր փրկարար ծառայության տարածքային ստորաբաժանումների և կցված զորամասերի հետ «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսուցման և ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքների բարելավման նպատակով,

3) կազմակերպում է ուսումնական հաստատություններում ուսումնական գեներ, ռազմամթերքի, փոքր տրամաչափի հրացանների, նյութատեխնիկական բազայի տարրերի պահպանումն ու նպատակային օգտագործումը,

4) ղեկավարում է տարածքի «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի մեթոդաբարձրման աշխատանքները, կազմակերպում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի աշխատանքները տարածքում,

5) աջակցում է տարածքային զինվորական կոմիսարիատին անհրաժեշտ աշխատանքների կատարմանը (դիսպանեթիզացիա, կցագրում գորակոչ, զորահավաք, ռազմական ուսումնական հաստատությունների թեկնածուների ընտրություն, փաստաթղթերի պատրաստում),

6) նոր նշանակված զինվորական ղեկավարներին ուղարկում է ուսումնամեթոդական հավաքների և որակավորման դասընթացների,

7) պատրաստում է զինվորական կոմիսարիատ և ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթեր՝ զինվորներին օրենքով սահմանված կարգով հեղթական զինվորական կոչում շնորհելու համար,

8) ներկայացնում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի և նյութատեխնիկական բազայի վերաբերյալ հաշվետվություն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերի (Ստեփանակերտի քաղաքապետարանի) կրթության բաժիններին և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն:

17. Ուսումնական հաստատության տնօրենը՝

1) պատասխանատվություն է կրում սովորողների «Նախնական զինվորական պատրաստություն»

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

առարկայի ուսուցման և ռազմահայրենասիրական դաստիարակության կազմակերպման համար,

2) ապահովում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ծրագրով նախատեսված տեսական և գործնական պարապմունքների անցկացման անհրաժեշտ պայմաններ և ուսումնանյութատեխնիկական բազա, անհրաժեշտ տարրերով,

3) զինղեկին ցույց է տալիս մեթոդամակարձակական օգնություն իրականացնելու միջառարկայական կապերը,

4) վերահսկում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի դասավանդման դրվածքը, արդյունքները քննարկում է մանկավարժական խորհրդի նիստում,

5) ուսումնական հաստատության կողմից տրված հայտարարության հիման վրա, սահմանված ժամկետում պահեստազորի սպաներից ներկայացնում է բարձրագույն ռազմական կրթությամբ կամ բարձրագույն կրթությամբ և համապատասխան վերապատրաստում անցած թեկնածուների տվյալները: Ուսումնական հաստատության տնօրենը մրցույթ կազմակերպելու համար ստեղծում է հանձնաժողով, որի կազմում պարտադիր ընդգրկվում է տվյալ տարածքի ավագ զինղեկը: Մրցույթի անցկացման տեսական և գործնական առաջադրանքների հարցաշարը կազմում է ավագ զինղեկը: Ուսումնական հաստատության տնօրենը մրցույթում հաղթած թեկնածուին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակում է ուսումնական հաստատության զինվորական ղեկավար՝ նրա հետ կնքելով համապատասխան աշխատանքային պայմանագիր:

18. Զինղեկը՝ 1) անմիջականորեն ենթարկվում է ուսումնական հաստատության տնօրենին: Նա պատասխանատու է սովորողների «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի դասավանդման, սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքների կազմակերպման, ուսումնական զենքի, ռազմամթերքի, փոքր տրամաչափի հրացանների, նրանց փամփուշտների հաշվառման, պահպանման ու նպատակային օգտագործման, գործնական պարապմունքների անցկացման ընթացքում անվտանգության կանոնների պահպանման համար, համաձայն «Զենքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի և նրանից բխող իրավական ակտերի,

2) անձամբ նախապատրաստում և անցկացնում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի դասավանդումը, ղեկավարում է ռազմական գործնական սովորող խմբակների աշխատանքը, 3) տնօրինում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի կաբինետը, զենքի պահպանման սենյակը, հրաձգային տիրը, «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսումնանյութատեխնիկական բազան,

4) հաշվառում և պահպանում է ուսումնական զենքը, փոքր տրամաչափի հրացանները, դրանց փամփուշտները՝ համաձայն «Զենքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի և նրանից բխող այլ իրավական ակտերի պահանջների,

5) ուսումնական հաստատության ղեկավարության և մանկավարժական կոլեկտիվի հետ համատեղ իրականացնում է սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակությունը,

6) սովորողներին մասնակից է դարձնում հրաձգության, ռազմակիրառական մարզաձևերի ու քաղաքացիական պաշտպանության համայնքային, շրջանային, հանրապետական մրցումներին,

7) առավելագույն օգտագործում է գործնական պարապմունքներ անցկացնող ստանձնած զորամասերի, կազմակերպությունների հնարավորություններն ու օժանդակությունը՝ «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի աշխատանքի որակը բարելավելու համար,

8) զինվորական կոմիսարիատների հետ համատեղ ուսումնական հաստատություններում կազմակերպում է բացատրական, քարոզչական աշխատանքներ՝ պատանիների ռազմական մասնագիտությունը ընդլայնելու, ռազմական ուսումնական հաստատություններ ընդունվելու նախապատրաստման համար, անհրաժեշտության դեպքում տնօրինության միջոցով ռազմական ուսումնական հաստատության դիմորդ-թեկնածուների համար քննական առարկաներից կազմակերպում է լրացուցիչ պարապմունքներ,

9) մշտապես բարձրացնում է իր մասնագիտական զինվորական և մանկավարժական կրթամակարդակը,

10) ուսումնական հաստատության դասղեկների (կուրսղեկների) հետ միասին կազմակերպում է նախագորակոչային տարիքի պատանիների զինվորական հաշվառման (կցագրման) համար անհրաժեշտ փաստաթղթերի նախապատրաստումը և, համագործակցելով զինվորական կոմիսարիատի հետ, ապահովում է նրանց ներկայությունը կցագրման տեղամասեր,

11) մասնակցում է զինվորական կոմիսարիատի կողմից կազմակերպվող ուսումնամեթոդական հավաքներին և մեթոդական պարապմունքներին, զորահավաքային աշխատանքներին, ուսումնական հաստատությանը կցված զորամասերի ուսումնական (ցուցադրական) գործակալություններին:

19. Զինղեկի աշխատանքը կարգավորվում է դասացուցակով, միջոցառումների ծրագրերով, տնօրենի կողմից հաստատված անհատական պլանով:

20. Զինղեկը կարող է ներգրավվել ուսումնական հաստատության հերթապահությանը:

21. Զինղեկը վարչական և դասղեկական պարտականություններ չի կարող ստանձնել:

22. Զինղեկը՝ ուսումնական հաստատությունում «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի հետ մեկտեղ չի կարող դասավանդել այլ ուսումնական հաստատությունում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զինված ուժերում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր փրկարար ծառայության համակարգում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության համակարգում:

23. Զինղեկի կողմից դասավանդվող շաբաթական մինչև 11 ժամը համարվում է մեկ միավոր:

1) հանրակրթական (հիմնական,

ավագ, միջնակարգ, վարժարան, կրթահամալիր) ուսումնական հաստատություններում սահմանվում է զինվորական ղեկավարի հաստիք և վարձատրվում է հանրակրթական ուղղորտի համար հաստատված մանկավարժական դրույքաչափերով (մինչև 6 դասարան ունեցող ուսումնական հաստատությունների համար 0,5 միավոր, իսկ 6 և ավելի դասարան ունեցող ուսումնական հաստատությունների համար՝ մեկ միավոր),

2) քաղաքացիական պաշտպանության աշխատանքների համար զինվորական ղեկավարը վարձատրվում է ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմի համար նախատեսված դրույքաչափերով, մինչև 6 դասարան ունեցող ուսումնական հաստատության համար՝ սպասարկող անձնակազմի միջին աշխատավարձի 0,3 միավոր, իսկ 6 և ավելի դասարան ունեցող ուսումնական հաստատության համար՝ սպասարկող անձնակազմի միջին աշխատավարձի 0,5 միավոր,

3) նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սահմանվում է զինվորական ղեկավարի հաստիք և վարձատրվում է միջին մասնագիտական ուղղորտի համար հաստատված դրույքաչափերով (մինչև 100 սովորող ունեցող ուսումնական հաստատության համար՝ 0,5 միավոր, 100 և ավելի սովորող ունեցող ուսումնական հաստատության համար՝ մեկ միավոր),

4) քաղաքացիական պաշտպանության աշխատանքների կատարման դիմաց վարձատրվում է ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմի համար նախատեսված դրույքաչափերով մինչև 100 սովորող ունեցող նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատության համար՝ 0,3 միավոր, իսկ 100 և ավելի սովորող ունեցող նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատության համար՝ 0,5 միավոր:

24. Զինղեկը պարտավոր է աշխատանքի ընթացքում կրել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից հաստատված նմուշի զինվորական համազգեստ, որը հատկացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության միջոցներով և հայտերով: Զինղեկն իրականացնում է ուսումնական հաստատության քաղաքացիական պաշտպանության կազմակերպումը:

IV. «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

25. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի շաբաթական ժամաքանակն ըստ դասարանների և ուսումնական խմբերի սահմանվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված տարեկան ուսումնական պլաններին համապատասխան: «Նախնական զինվորական պատրաստություն» առարկան համարվում է ուսումնական պլանով նախատեսված պարտադիր առարկա:

26. «Նախնական զինվորական

պատրաստություն» առարկայի ծրագիրը մշակվում և հաստատվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության հետ:

27. Յուրաքանչյուր ուսումնական հաստատությունում մշակվում և հաստատվում է տարեկան պլան՝ ըստ շաբաթների:

28. Պարապմունքների անցկացման ժամանակ դասարանները (խմբերը) համարվում են դասակներ և բաժանվում են ջոկերի, որոնց հրամանատարները, զինղեկի ներկայացմամբ, նշանակվում են տնօրենի հրամանով:

29. Պարապմունքների ընթացքում ձեռք բերած գիտելիքների և ունակությունների ամրապնդման նպատակով, ռազմագիտության ամփոփիչ փուլում կցված զորամասի բազաներում անցկացվում են ծրագրով նախատեսված ռազմադաշտային պարապմունքներ (հավաքներ):

Պարապմունքների համար սահմանված ժամաքանակը կարող է երկարացվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարությունների, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության փրկարար ծառայության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության կողմից համատեղ սահմանված կարգով:

30. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկան գնահատվում է կիսամյակային և տարեկան գնահատականներով՝ ընթացիկ գնահատականների հիման վրա:

31. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայից սովորողները ազատվում են միայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի սահմանած կարգով:

32. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի լրիվ դասընթացն ավարտած պատանիների ցուցակը՝ ամփոփիչ գնահատականներով, ուղարկվում է նրանց գրանցման վայրի զինկոմիսարիատ:

33. Ուսումնական հաստատություններում ռազմահայրենասիրական աշխատանքները կազմակերպվում և անցկացվում են ուսումնական և աշխատանքային պլաններին համապատասխան: Այդ աշխատանքներն իրականացվում են սովորողների մեջ բարոյականային հատկանիշներ, կարգապահության ու զինվորական ծառայության նկատմամբ պատասխանատու վերաբերմունք, ինչպես նաև՝ հայրենիքին և նրա պաշտպանությանը նվիրվածություն դաստիարակելու նպատակով:

34. Նախագորակոչային պատրաստության արդյունքների և հսկողության անցկացման վերաբերյալ եզրակացությունը ներկայացվում է համաձայն սույն կանոնադրության ձև 4-ի:

V. ՆԱԽԱԶՈՐԱԿՈՍԱՅԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ

ՆՅՈՒԹՅՆԵՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԱՊԱՂՈՎՈՒՄԸ

35. Սովորողների «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի անցկացման համար նյութատեխնիկական բազան ապահովում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության, այլ շահագրգիռ նախարարությունները և գերատեսչությունները, որոնց ենթակայության տակ գտնվում են ուսումնական հաստատությունները՝

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարությունը՝ ուսումնական զենքով, ռազմամթերքով, փոքր տրամաչափի հրացաններով և նրանց փամփուշտներով՝ «Զենքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով և նրանից բխող իրավական ակտերով սահմանված կարգով,

2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարությունը՝ բժշկական գիտելիքների ուսուցման համար անհրաժեշտ ուսումնամեթոդական պարագաներով,

3) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր փրկարար ծառայությունը՝ քաղաքացիական պաշտպանության ուսումնական զույքով, պաշտպանական անհատական միջոցներով, ճառագայթային և քիմիական հետազոտության սարքերով:

36. Ուսումնական զենքի, ռազմամթերքի, փոքր տրամաչափի հրացանների և նրանց փամփուշտների ստացումը, հաշվառումը և պահպանումը կատարվում է «Զենքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով և նրանից բխող իրավական ակտերով սահմանված կարգով:

37. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ծրագրի պահանջներին համապատասխան յուրաքանչյուր ուսումնական հաստատությունում ստեղծվում է ուսումնական նյութատեխնիկական բազա, որն անընդհատ կատարելագործվում և համալրվում է:

38. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի նյութատեխնիկական բազան ընդգրկում է՝

1) հատուկ կահավորված դասասենյակ, որն օգտագործվում է միայն «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի անցկացման համար,

2) ուսումնական զենքն ու ռազմամթերքը, փոքր տրամաչափի հրացանները, դրանք պահելու համար կահավորված զենքի պահպանման սենյակը,

3) մարտավարության, շարային պատրաստության և քաղաքացիական պարապմունքների վայրերը,

4) ֆիզիկական կուլտուրայի, ուժային վարժությունների, պաշտպանման բազաների միջոցառումների հրապարակները,

5) ժամապահի, օրապահի պարտականությունների գործնական պարապմունքների անցկացման կետերը,

6) ուսումնական զենքի մաքրման և յուղման, հրաձգության գործնական հնարքների կատարման մշակման տեղերը,

7) ուսումնագիտողական ձեռնարկները, ուսուցման տեխնիկական միջոցները, անհրաժեշտ այլ գույքը:

Հրաձգության տիրը և բժշկական գիտելիքների հիմունքների դասասենյակի առկայությունը ցանկալի է:



ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ենթահավելված
Լեռնային Ղարաբաղի Յանտարային կրթության և գիտության նախարարի 2012
թվականի օգոստոսի 16-ի N145/Ն և Լեռնային Ղարաբաղի Յանտարային կրթության
պաշտպանության նախարարի 2012թվականի օգոստոսի 18-ի N 246 - Ն «Հիմնական,
միջնակարգ հանրակրթական դպրոցներում, վարժարաններում, կրթահամալիրներում,
նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական
ուսումնական հաստատություններում սովորողների նախազորակոչային պատրաստության
կանոնադրությունը հաստատելու մասին» համատեղ հրամանով հաստատված
կանոնադրության

Ձև 1

Ա Ս Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ուսումնական հաստատության անվանումը, գտնվելու վայրը
Տնօրեն
Անուն, ազգանուն, երբևիցե և աշխատում այդ պաշտոնում
Զինդեկ
Զինվորական կոչում, անուն, ազգանուն, ծննդյան թիվ
կրթություն (ընդհանուր, զինվորական) մինչ պահեստ արձակվելը
զբաղեցրած զինվորական պաշտոնը, երբևիցե և զբաղեցնում
զինվորական ղեկավարի պաշտոնը

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Նախնական զինվորական պատրաստությունը անցկացվում է
դասարաններում (խմբերում), ուսման մեջ ընդգրկված սովորողներ, այդ թվում պատանիներ:
2. Վերջին 3 տարվա ընթացքում «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի
վիճակը ուսումնասիրվել է (ստուգվել է)
ստուգող կազմակերպությունը, գտնվելու վայրը
ստուգման ժամկետը, ստացած գնահատականը

II. «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՎԻՃԱԿԸ ԸՆԹԱՑԻԿ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ

1. Նախնական զինվորական պատրաստությունը ծրագրորդ ստուգման օրը կատարվել է
%-ով, դասերին հաճախումը կազմում է %:
2. Սովորողների կողմից ծրագրի յուրացման աստիճանը տնօրինությունը ստուգել է
Ժամկետը, ծրագրի բաժինը, դասարանը, ստուգված սովորողների թիվը, ստուգման
գնահատականը
3. Տնօրենը ստուգել է զինդեկի անցկացրած պարապմունքը և գնահատել է:
4. Ուսումնական պարապմունքները և ինքնաձիգ զենքով հրաձգությունը մարտական
փամփուշտներով անցկացվել են (պլանավորվել են)
Ժամկետը
գտնվելու վայրը և մեթոդը
5. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի վիճակը քննարկվել է
մանկավարժական խորհրդում
խորհրդակցության ժամանակաշրջանը
արդյունքները

III. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԶԵՆՔԻ ԵՎ ԱՅԼ ՑՈՒՑԱԿԱՆՈՒՄԻ ԳՈՒՅՔԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Ինքնաձիգ հատ,
Փոքր տրամաչափի հրացան հատ,
Չեռքի նռնակ հատ,
Ինքնաձիգի ուսումնական փամփուշտներ հատ,
Հրամանատարական արկղիկ հատ,
Համազորային պաշտպանական հագուստ լրակազմ (կոմպլեկտ),
ճառագայթային չափասարք հատ,
Քիմիական հետախուզման գորսարք հատ:
Պակասում են՝
թվարկել
Ընել պատճառը

IV. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

անվանումը առկայությունը
ծանոթություն
Նախնական զինվորական պատրաստության դասաստեղծակ
Զենքի պահպանման սենյակ
Հրաձգարան
Ուսումնական համալիր (վայր)՝
Մարտավարության
Քաղաքացիական պաշտպանության մարզահրապարակ
Շարային պատրաստության հրապարակ
Հրաձգության կանոնների և հնարքների կատարման հրապարակ
Գործնական պարապմունքի վայրեր
Օրապահի
Ժամապահի
Զենքի մաքրման և յուղման տեղ
Մարմնակրթության պատրաստության, ուժային վարժանքների հրապարակ,
մարզադահլիճ
Մարտական փառքի սրահ (սենյակ)
Զենքի հափշտակման
դեպքեր
երբ է կատարվել, քանակը
տեսակը, պատճառը և հետախուզման արդյունքները

«Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսումնական
նյութատեխնիկական բազան գնահատվում է:

V. ՏՎՅԱԼՆԵՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ուսումնական հաստատությունում գործում են
պաշտպանական խմբակներ
ինչ խմբակներ են գործում
2. Ավարտական դասարանների (խմբերի) պատանիներից բազմամարտի նորմերը
հանձնել են
3. Վերջին 3 տարում ռազմական ուսումնական հաստատություններ են դիմել
շրջանավարտ: Նրանցից ընդունվել են մարդ:
4. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի պարապմունքներին
մասնակցող սովորողներից իրավախախտումներ են թույլ տվել
մարդ

պատճառը, իրավախախտումը

VI. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Տ Ն Օ Ր Ե Ն
201\_թ.
ստորագրություն

Ձև 2

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

I. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՎԻՃԱԿԻ ԱՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ուսումնական հաստատության լրիվ անվանումը, գտնվելու վայրը
Տնօրեն
ազգանուն, անուն
Զինդեկ
ազգանուն, անուն
պաշտոնավարման ժամանակաշրջանը, երբ է անցել ուսումնական հավաքներ,
որակավորման դասընթացներ
1. Պլանավորումը
համապատասխանում է, չի համապատասխանում
ծրագրի պահանջներին
Թերությունները
թվարկել
2. Ծրագրի կատարումը, ստուգման օրը
%:
Ինչ հարցեր չեն ուսումնասիրվել և ինչու, պատճառները
3. Պարապմունքներին հաճախումների միջինը
%,
ստուգման օրը
%:
Զիանախելու հիմնական պատճառները

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

II. «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ ՈՐԱԿԸ ԳՆԱՀԱՏՎՈՒՄ Է ԱՅՂ ԹՎՈՒՄ ԸՍՏ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲԱԺԻՆՆԵՐԻ (ԹԵՄԱՆԵՐԻ)

Table with 7 columns: Ծրագրի բաժիններ, Դասարան (խումբ), Ստուգվել են, սովորողների թիվը, Գնահատականներ (գերազանց, լավ, բավարար, անբավարար), Ընդհանուր գնահատական, Ընդհանուր ստուգվել է, Սովորող %

Սովորողները բավարար չափով չեն յուրացրել (ըստ ծրագրի նշել յուրաքանչյուր բաժնի հարցերը)

III. ԲԱԶՄԱՍՈՒՄԻ ՆՈՐՄԱՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ

Ստուգվել է \_\_\_\_\_ սովորող: Նրանցից նորմաները հանձնել են \_\_\_\_\_%, այդ թվում՝ պատճառով վրա ձգում վարժությունից \_\_\_\_\_%, վազբից \_\_\_\_\_%, Նոնակների նետումից \_\_\_\_\_%: Թերությունները \_\_\_\_\_:

IV. «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԱՆՅԿԱՑՄԱՆ ՈՐԱԿԸ ԳՆԱՀԱՏՎՈՒՄ Է

- 1. Պարապմունքների թեման:
2. Դրական, առավել բնութագրական, ուշադրության և տարածման արժանի աշխատանքը \_\_\_\_\_
թերությունները \_\_\_\_\_
այդ թվում՝ դասի անհամապատասխանությունը \_\_\_\_\_
դասի վատ կահավորվածությունը, նյութատեխնիկական բազան թերի \_\_\_\_\_
օգտագործելը, դասի դաստիարակչական աշխատանքի բացակայությունը ընթացքում և այլն \_\_\_\_\_

V. ՈՒՍՈՒՄՆԱՅՈՒԹԱԿԱՆ ԲԱԶՄԱՅԻ ՎԻՃԱԿԸ ԳՆԱՀԱՏՎՈՒՄ Է

- 1. Դրական աշխատանք \_\_\_\_\_
որն է արժանի ուշադրության և տարածման \_\_\_\_\_
և առավել բնութագրական է \_\_\_\_\_
2. Պակասում է \_\_\_\_\_
թվարկել պակաս տարրերը, ամբողջական կառույցները և այլն \_\_\_\_\_
3. Թերությունները \_\_\_\_\_
բացակայում են, չեն համապատասխանում կանոնադրական պահանջներին \_\_\_\_\_
թվարկել սարքավորումների թերությունները, նշել զենքերի վիճակը \_\_\_\_\_
նշել թերությունների պատճառները \_\_\_\_\_

VI. ՈԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԻՃԱԿԸ ԳՆԱՀԱՏՎՈՒՄ Է

- 1. Աշխատանքային պլանի (համապատասխան բաժնի) առկայությունը \_\_\_\_\_
կազմված է, թե՛ ոչ, թերությունները, դրական, \_\_\_\_\_

Ժամկետների պահպանումը, միջոցառումների ուղղվածությունը

- 2. Մարտական փառքի թանգարանների, սրահների, սենյակների առկայությունը և կահավորվածությունը \_\_\_\_\_
նշել՝ ծառայում են դրանք իրենց նպատակին, թե՛ ոչ, \_\_\_\_\_

ինչ աշխատանքներ են կատարվում

Դիտողական, քարոզչական նյութերի առկայությունը \_\_\_\_\_
ձևավորումը \_\_\_\_\_

ինչ հարցեր են լուսաբանվում և չեն լուսաբանվում, դրանց \_\_\_\_\_

բովանդակությունը, հրատապությունը և այլն \_\_\_\_\_

- 3. Գործնական կապերը զորամասերի հետ \_\_\_\_\_

կապերի առկայությունը, համատեղ աշխատանքը \_\_\_\_\_

- 4. Կապը այն զորամասերի հետ, որոնցում ծառայում են շրջանավարտները \_\_\_\_\_

նշել առկայությունը և ձևերը \_\_\_\_\_

- 5. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայից ունեցող պատանիների կողմից իրավախախտումները \_\_\_\_\_

եղել են, թե ոչ, պատճառները \_\_\_\_\_

VII. «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԵԿՎԱՐՄԱՆ ՎԻՃԱԿԸ

- 1. Ուսումնական հաստատությունում արձակված հրամանները «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի վերաբերյալ \_\_\_\_\_

նշել բովանդակությունը, ժամկետը \_\_\_\_\_

- 2. Մանկավարժական խորհրդի աշխատանքը \_\_\_\_\_
որոշումները, արձանագրությունները \_\_\_\_\_

կատարման ժամկետները և ընթացքը \_\_\_\_\_

- 3. Առարկայական մեթոդական հանձնաժողովի աշխատանքը \_\_\_\_\_
նշել \_\_\_\_\_

առկայությունը և հակիրճ բովանդակությունը \_\_\_\_\_

- 4. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի անցկացման վերահսկողությունը \_\_\_\_\_

դասարանների, դեկավարների կողմից պարապմունքներին մասնակցելու, \_\_\_\_\_

ստուգումներ կատարելու աշխատանքը, վերահսկողության արդյունքները: \_\_\_\_\_

- 5. Ռազմասպորտային տոնակատարության անցկացումը \_\_\_\_\_

պլանավորումը \_\_\_\_\_

նախապատրաստական աշխատանքը, արդյունավետությունը \_\_\_\_\_

Ընդհանուր գնահատականը \_\_\_\_\_

Առաջարկություններ «Նախնական զինվորական պատրաստություն» աշխատանքի բարելավման վերաբերյալ \_\_\_\_\_

ՍՏՈՒԳՈՂ

(ԱՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ)

զինվորական կոչումը, ստորագրություն, ազգանուն \_\_\_\_\_

զինվորական կոչումը, ստորագրություն, ազգանուն \_\_\_\_\_

զինվորական կոչումը, ստորագրություն, ազգանուն \_\_\_\_\_



### ՈՒՍԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ

Հարգարժան Լարիսա Արմենակի  
ԼՂՀ կրթության և գիտության նախարարությունը ջերմորեն շնորհավորում է Ձեզ՝ 65-ամյա հոբելյանի առթիվ:

Լարիսա Սարգսյանն արդեն 42 տարի է՝ աշխատում է կրթության համակարգում՝ արժանվույն անցնելով իր ճանապարհը կենսաբանության ուսուցչից մինչև Ստեփանակերտ քաղաքի ուսուցիչների արհմիության նախագահ, այնուհետև՝ ԼՂՀ կրթության և գիտության նախարարության գլխավոր մասնագետ, պետական տեսուչ: Դրանք տքնաջան աշխատանքի ոչ դյուրին, բայց արգասաբեր տարիներ են:

Մանկավարժական աշխատանքը նրա սիրած գործն է, կյանքի իմաստը: Լարիսա Սարգսյանի անձնային որակները, բնավորության պարզությունը նրա հետ շփվող յուրաքանչյուրի հարգանքն են հարուցում:

Շնորհավորելով Ձեզ, տիկին Սարգսյան, մաղթում ենք քաջամոռություն, իսկ Ձեր զավակներին ու թոռներին, որոնց նվիրել եք Ձեր կյանքը՝ երջանկություն և բարեկեցություն:

Շնորհակալություն՝ Ձեր աշխատանքի ու բարի սրտի համար:



ման բաժնի գլխավոր մասնագետն էր: Արցախյան պատերազմի տարիներին Ս. Մխիթարյանը հող հայրենիի պաշտպանների շարքում էր: 2011թ. նա պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով: Վերջին տարիներին Ս. Մխիթարյանը ղեկավարում է կրթության պետական տեսչության բաժինը: Կրթական հաստատությունների տեսչավորման, դպրոցի ղե-

ԼՂՀ ԿԳ նախարարության աշխատակազմն ի սրտե շնորհավորում է ԿՊՏ պետական տեսուչ, հայոց լեզվի և գրականության գլխավոր մասնագետ Գայանե Գրիգորյանին՝ ծննդյան 55-ամյակի կապակցությամբ:

Գայանե Գրիգորյանը աչքի է ընկնում որպես հաստատական և նպատակալաց, պատասխանատվությամբ լի, ուղղամիտ, արդարամիտ և ճշմարիտ, անաչառ ու համեստ անձնավորություն:

Նրա խոսքը տարբերվում է ներքին ուժով, համոզվածությամբ: Ասումները վարպետ է, մարդկային բոլոր լավագույն որակները կազմում են նրա հոգու հարստությունը: Նրանք, ովքեր ճանաչում են Գայանե Գրիգորյանին, բարձր են գնահատում նրա անձնային որակները և երախտապարտ են նրան՝ բազմամյա բարեխիղճ, անխոց աշխատանքի համար: Անմիջական է բոլորի հետ, պարզ է, անկեղծ, բարյացակամ, զինված մեծ համբերությամբ:

Գայանե Գրիգորյանը խորապես տիրապետում է իր մասնագիտությանը, գիտի հայ ժողովրդի ավանդույթները, մշակույթն ու կենցաղը: Միշտ շրջապատված է մայրենիի ուսուցիչներով, իր գործընկերներով և վայելում է նրանց սերն ու հարգանքը:

Մեր շատ սիրելի Գայանե՛, շնորհավորելով Ձեզ, ի խորոց սրտի ցանկանում ենք ընտանեկան երջանկություն, ստեղծագործական մեծ հաջողություններ: Թող Աստված Ձեզ առողջություն, երկար տարիների կյանք պարգևի:

ԼՂՀ ԿԳ նախարարության կուլեկտիվն ի սրտե շնորհավորում է Մանվել Մխիթարյանին՝ ծննդյան 55-րդ տարեդարձի առթիվ:

Իր կյանքի 28 տարին Մանվել Մխիթարյանը նվիրել է մատաղ սերունդի դաստիարակությանը, ուսուցանել Հայաստանի և Արցախի պատմությունը:

Իր կոչումը նա որոշել է դեռ դպրոցական տարիներին՝ Ստեփանակերտի հ. 1 դպրոցում սովորելու ժամանակ: Նրա ման-

կավարության և ուսուցիչների հետ աշխատանքի ընթացքում միշտ զգացվում է նրա բարեկրթությունը, մանկավարժական տակտը, պարզությունը շփման մեջ:

Վերստին շնորհավորելով հոբելյարին՝ ցանկանում ենք նոր հաջողություններ անձնական կյանքում և աշխատանքում:



Վանա լիճ

### ԼՂՀ կրթության և գիտության նախարարություն ՈՒՍՈՒՑԻ ԻՐԱՎԱՆ ԿԵՐՊԱՐԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ (Մասնագիտական-տեսական)

Ուսուցման գործընթացում բազմաթիվ արդիական խնդիրներ կարելի է հնչեցնել:

Իմ համոզմունքով արդիական հնչողություն պիտի ունենա նաև ուսուցչի ապրած կյանքը: Մենք գիտենք, որ մատաղ սերունդի համար կյանքի լավագույն դպրոց է հայոց մեծերի կյանքն ու գործունեությունը՝ սկսած սրբազնագույն Մաշտոցից: Նրանց կենսափորձն ու իմաստությունը, բազում խորհրդածությունները կրթության, գրականության, արվեստի գանազան բնագավառների մասին այսօր էլ գրավիչ իմաստություններ են և արդիական հնչողություն ունեն:

Բայց որքանով է ուսուցիչն իր իրական կերպարով՝ կյանքով ու գործունեությամբ, իր ապրելակերպով մասնակիցը դառնում գրողի կյանքի կամ գրական երկի վերլուծությանը:

Միշտ էլ փորձել եմ մանուշանու եզեր գտնել տվյալ ժամանակաշրջանի,--- գրական ստեղծագործության մեջ տեղի ունեցած այս կամ այն դեպքի, գրողի կամ գրական հերոսի ապրած կյանքի միջև, համոզված, որ դասապրոցեսում դրանք դառնում են մարդկային լավագույն հատկությունների դաստիարակության գեղեցիկ օրինակներ:

Ամեն անգամ, երբ աշակերտներին խորհուրդ եմ տալիս, որ գեղեցիկ գրեն, հիշում եմ ամենայն հայոց բանաստեղծի իմաստուն միտքը, որ ձեռագիրն էլ բնավորություն է ձևավորում:

Բայց այսօր այդ ո՞ր մի ծնողը կվարեր թունամյանի ման: Երբ նա Վանից ստացել էր տղայի՝ Արտիկի մամակը, առանց կարդալու ետ էր ուղարկել՝ նամակի վրա գրելով. «Գրիր ինչ ես գրել»:

Հետպատերազմյան շրջանի իմ մանկավարժական աշխատանքային գործունեության առաջին ուստարում, վերջին նստարանին նստած, 4-րդ դասարանի աշակերտուհի փոքրիկ Արմինեի պատկերն առայսօր իմ հիշողության մեջ է գանվել: Որը ծանր հիվանդությունից հետո մահացավ: Այդ օրերին որքա՞ն սուր զգացի Չարենցի ապրած զգացողությունը, երբ 1919-1920թթ. որպես ուսուցիչ աշխատում էր Կարսի գյուղական դպրոցներից մեկում: Իր աչքի առջև անընդհատ սովից մահանում էին դպրոցի երեխաները: Նրանց դպրոցի դեմքերն ամբողջ կյանքում չհեռացան բանաստեղծի մտապատկերից: Շատ լավ հասկանում էի, թե ամեն օր դասամատյանում աշակերտների անունները պակասելուց Չարենցն ինչպիսի սարսա---ելի լարված վիճակ էր ապրել:

Այդ ուսումնականում ամեն անգամ, մտնելով այդ դասարան, որքա՞ն ծանր ապրումներ էի ունենում, երբ դասամատյանում՝ նրա ամվան դիմաց, դատարկ վանդակներ էին տեսնում՝

Երբ Գ.Սահարի եմ անցնում, որը Երևանի որբանոցներից մեկում դասավանդող Չարենցի սանն էր, ցավի զգացողությունը պատում է իմ հոգին, և ամեն անգամ ավելի լավ եմ ընկալում հորս ապրումները, երբ վաղ հասակից, ծնողների կորցնելով, նրան քրոջ հետ տարան որբանոց: Իսկ երբ զաղթի ճանապարհին, պատմում եմ, որ Սահարին քրոջն էր կորցրել, փորձում եմ ամեն անգամ մանուշանու եզեր գտնել գրողի և հորս չակատագրի միջև: Նա էլ էր քույր կորցրել, որին այդպես էլ չգտավ, քանի որ նրանց տարբեր որբանոցներում էին տեղավորել /տղաների և աղջկաների/:

Որբանոցային դառը կյանքի մասին մանրամասնություններ այդպես էլ չպատմեցի հայրս, բայց մի բան գիտեմ միայն, որ նա Հայաստանի տարբեր քաղաքների որբանոցներում էր եղել: Իրենից մեկուկես տասնամյակ առաջ այդ որբանոցներում ապրած Գ.Սահարին հետագայում իր «Ինքնակենսագրականի» մեջ պիտի գրեր, «1915թ. ես

### ՇՈՒՆԻ ԿԻՐՃՈՒՄ

Ճիշտ է, ես 9-րդ դասարանից դուրս եմ եկել Բերձորի Վահան թեքնյանի անվան միջնակարգ դպրոցից և ուսումնա շարունակում եմ Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի թուեզի դիզայնի բաժնում, սակայն մտովի միշտ իմ դասարանի հետ եմ, իսկ Բերձոր գալուս դեպքում այցելում եմ դպրոց, մասնակցում դասերին: Վերջերս մեր դասարանցիները որոշել էին այցելել մեր երկրի որևէ գեղատեսիլ կամ պատմական վայր: Հայրս, որ լավ է ճանաչում Քաշաթաղի և Շուշիի շրջանները, առաջարկեց մեկօրյա հանգիստն անցկացնել Շուշիի կիրճում՝ Հունուտի ձորում, որտեղ պահպանվել են հնամենի տներ, կամուրջներ: Մեր դասուղեկի և առաջին ուսուցչի հետ Սայաթ քեռու մեքենայով դուրս եկանք Բերձորից և հասանք Մխիթարաշեն կոչվող գյուղը: Այստեղից ճանապարհը պետք է շարունակեինք ոտքով: Նախորդ գիշեր տեղացած անձրևից ճանապարհը ցեխապատ էր, բայց եղանակը բարենպաստ էր: Մեզ դեպի Հունուտի ձոր ուղեկցեց Մխիթարաշենից Սևակ անունով մի երիտասարդ: Ընտ-



րեցինք մի բացատ, որտեղ պետք է հանգստանայինք: Սակայն շտապում էինք թուեք առաջ տեսնել Հունուտի ձորի հրաշքներից մեկը՝ հավերժ կամաչ քարանձավը, որի վրայով ջրվեժ է իջնում: Մի արահետով շարժվեցինք առաջ: Ճանապարհի մի մասն անանկառ գետի միջով: Վերջապես հասանք տեղ. երկու գերան գետի ափերը կապում էին իրար: Մտնում ենք քարանձավ: Դարերի ընթացքում բնությունը գեղատեսիլ ու հետաքրքիր քանդակներ է արել քարանձավի առաստաղին ու պատերին: Ներսում էլ կարծես անձրև էր մաղում, իսկ քարանձավի մուտքը պատված է ջրե վարագույրով: Երկար ժամանակ ուսումնասիրում էինք քարանձավը, տարածքը, լուրացանք գետում և վերադարձանք հիանալի տպավորությամբ: Իր վեհությամբ ու գեղեցկությամբ ավելի հմայիչ էին կիրճի ուղղաձիգ, բարձրաբերձ ժայռապատերը, որոնք նաև արժվաբեր են: Գետի ծախակողմյան ժայռապատից չնայած բարակ, բայց գեղեցիկ ջրվեժ է իջնում, իսկ քիչ ներքև միջնադարյան բեր-

դապարսպի երկու բուրգ առավել գեղեցիկ ու տպավորիչ են դարձնում տեսողաշտը: Այստեղ նաև քարե կամարակապ կամուրջ կա, որտեղով ժամանակին Վարանդայի զինվորներն ու բնակիչները դեպի բերդ են բարձրացել: Մի պահ պատկերացնում եմ, թե ինչպես էին 1992 թվականի մայիսի 8-ին հայոց քաջերը բարձրանում ժայռն ի վեր և մեր պատմական հայրենիքից դուրս քշում թշնամուն: Հայրս ասում է, որ նաև այլ ուղղությամբ էին գրոհում հայոց քաջերը: Օրը մոտենում է ավարտին. դուրս ենք գալիս Շուշիի կիրճից՝ տպավորված գեղատեսիլ բնությամբ ու մեր պայքերի կառուցած կամուրջով, քարե տանիքներով շինություններով: Բայց մեր էքսկուրսիան շարունակվում է: Հաջորդ կանգառը Շուշի քաղաքի Ջրղորդու գոչվող տարածքն էր: Հազարավոր սպիտակ ծաղիկները, հիմնականում երիցուկներ, չքնաղ տեսարան էին ստեղծել, իսկ վերինց արդեն այլ կերպ էր դիտվում կիրճը: Սպիտակ ծաղիկներից ծաղկեպսակներ ենք հյուսում, լուսանկարվում: Մայրամուտին Շուշիի Դազանչեցոց եկեղեցու գմբեթը